Ընտրակաշմոռք եք ուզում բացահայտել՝ գնացեք կալանավորեք բոլոր երեւանամերձ համայնքների ղեկավարներին, որ նախընտրական շրջանում՝ հունվարից սկսած, համայնքային բյուջեից ֆինանսավորում են անվճար ուսանողական ավտոբուսներ, իրենք են որոշում՝ որ ուսանողն ինչ հիմքով ստանա այդ ավտոբուսով երթեւեկելու արտոնություն:

Կարդացեք՝ էջ 4

Այդ ընչազուրկ եւ անինքնասեր մարդկանց նա նայել է վերեւից, ասել է՝ աղքատությունն իրենց գլխում է, վատ կյանքը՝ իրենց անկրթության ու հետամնացության պատճառով: Նրանց զզվանքով հեռացրել է իրենից եւ ապրել որպես էլիտա: Հիմա նորից դուրս է եկել եւ չափչփում է ամենացածր խավի խորխորատները: Գրազ կգամ՝ անտանելի բան է:

Կարդացեք՝ էջ 5

Գիտեք, թե որն է զավեշտալի, փոսերը մաքրում են, շիբինը լցնում ու սպասում, մինչեւ անձրեւ գա, հետո էդ թաց փոսերի մեջ ասֆալտ են լցնում: Բնականաբար, մի սեզոն էլ չի դիմանում: Մի անգամ հանդիպեցի բանվորներին՝ Ուսանողական փողոցի փոսերը մաքրելիս, ասացի. «Մինչեւ անձրեւ չգա, չեք փակի, չէ՞»: Այդպես էլ եղավ:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 52 (4187), 2 ապրիլ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Նիկոլ Փաշինյանը թեեւ տեւական ժամանակ է, ինչ դադարեցրել է Եկեղեցու եւ հոգեւոր դասի նկատմամբ հրապարակային արշավը, պասի մեջ գտնվելով՝ անգամ չի այցելում եկեղեցի, ոչ կանոնական պատարագներ չի պարտադրում, որոնց ընթացքում զեղչվեին Վեհափառի անունը, սակայն Եկեղեցու դեմ մոլագար մտքերից չի հրաժարվել, եւ արշավն իրականացվում է ծածուկ: Օրեր առաջ բանակում գործող գնդերեցների ծառայությունն ապամոնտաժեցին, հիմա որսի են դուրս եկել Մայր Աթոռի հոգեւոր ծառայության անդամների նկատմամբ: ՔԿՀ-ներում երկար տարիներ ծառայություն իրականացնող հոգեւորականները, որոնք հոգեւոր աջակցություն են ցուցաբերում դատապարտյալներին, լուրջ խոչընդոտների են հանդիպում: Փորձել են այս հոգեւորականներին հանել Վեհափառի դեմ, սակայն մերժում են ստացել: Դրանից գազազած՝ սկսել են հոգեւորականների դեմ քայլեր անել: Մեզ ասացին, որ Քրեակատարողական ծառայության հոգեւոր առաջնորդ Հայր Իսահակին տեւական ժամանակ թույլ չեն տալիս մտնել «Երեւան-Կենտրոն» ՔԿՀ, իսկ Արգավանդի եկեղեցու հոգեւոր հորը՝ Տեր Գրիգոր քահանա Հովհաննիսյանին, որն ավելի քան 15 տարի այցելում է ցմահ ազատազրկվածներին, վերջերս թույլ չեն տվել մուտք գործել «Նուբարաշեն» ՔԿՀ՝ առանց բացատրության: Նա փորձել է ՔԿՀ ղեկավարությունից պարզաբանում ստանալ, սակայն չի հաջողվել: Սա նշանակում է, որ Եկեղեցու նկատմամբ իշխանությունների ներկայիս լոյալությունը թվացյալ է ու ժամանակավոր՝ հասկացել են, որ այդ գործողությունները հանրային ընդվզում են առաջացնում, վնասում են իրենց վարկանիշին, որոշել են ժամանակավոր հրադադար վերցնել՝ հույսով, որ ընտրություններից հետո կվերարտադրվեն եւ իրենց բոլոր չար ծրագրերն ավարտին կհասցնեն:

Իշխանությունը մարտի 27-ին փոփոխություններ է կատարել նաեւ Ներման հարցերի հանձնաժողովի կազմում: Փոխվել է ՀՀ նախագահին կից խորհրդակցական այս հանձնաժողովի անդամի նշանակման կարգը, եւ հանձնաժողովի անդամ է նշանակվել Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Գեւորգ-Արման Սարոյանը: Հիշեցնենք որ Արման Սարոյանը (նախկինում՝ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյան) հունվարի 27-ին Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից կարգալույծ էր հռչակվել: Նա հանձնաժողովում կփոխարինի Տեր Ռուբեն վարդապետ Զարգարյանին, որը երկար տարիներ Ներման հանձնաժողովի անդամ է եղել: Հոգեւորականի թեկնածությունը հանձնաժողովի կազմում, որպես կանոն, ներկայացրել էր Մայր Աթոռը: Տեր Ռուբենն այժմ Մասյացոտնի թեմի առաջնորդի պարտականություններն է կատարում:

Աթոռի գերին

Ընդդիմությանը վիկտորինաներ առաջարկող, հումոր անող, ծաղրող Նիկոլ Փաշինյանն իրեն անպարտելի ու անպատժելի է զգում Հայաստանում՝ թիկնազորով ու տարբեր ուժայիններով, պետբյուջեից բարձր աշխատավարձ ստացողներով ու իրենց աթոռների վրա դողացողներով շրջապատված: Նրան երեւի թվում է, թե իր անձին են ծառայում այդ մարդիկ, երբ իր հրահանգով բազմությունն են ճեղքում, պատարագներ պղծում, մարդկանց բերման ենթարկում, կալանավորում: Մի փոքր խելացի մարդը կհասկանար, որ դա ոչ թե իր ուժն է, այլ՝ իր պաշտոնի: Իսկ պաշտոնը, ինչպես հայտնի է, հավերժ չէ, եւ մի փոքր ողջամիտ մարդն այնպես կաներ, որ պաշտոնից զրկվելուց հետո իր նկատմամբ չկիրառվեին այն մեթոդներն ու գործիքակազմը, որն ինքը կիրառում է ընդդիմադիր հայացքներ ունեցող, իշխանական լծակներ չունեցող անձանց նկատմամբ: Բայց, ինչպես ասում են, բնությունը ժլատ է գտնվել եւ խելքի ու հեռատեսության հարցերում նրա նկատմամբ շռայլ չի գտնվել: Նրան թվում է, թե ինքը հավերժ պաշտոնավարելու է եւ բումերանգի էֆեկտը երբեք չի զգալու իր մաշկի վրա: Ի դեպ, նա դա չի էլ թաքցնում. օրեր առաջ լրագրողի հարցին, թե դուք ժամանակին դեմ էիք, որ երկու ժամկետից ավելի ղեկավարը պաշտոնավարի, հիմա ձգտում եք 3-րդ «սռոկին» գնալ, ասաց, որ խորհրդարանական կառավարման համակարգը սռոկ-մռոկ չի ճանաչում՝ ինքը կարող է հավերժ ընտրվել, եւ օրինակ բերեց եվրոպական երկրները, որտեղ վարչապետները 3-4 անգամ վերընտրվում են: Բայց հարցը հնարավորությունը չէ, այլ՝ բարոյականությունը, պարկեշտությունը, սկզբունքներ ունենալը եւ քո մարմնի ծանրությունից արդեն ճկված աթոռն ազատելը: Այն, որ հասկանաս քո ավերածությունների հետեւանքները եւ տեղ բացես ուրիշի համար՝ քեզ մոտ արդեն չի ստացվել, գուցե մեկ ուրիշի մոտ ստացվի:

Նիկոլ Փաշինյանի մոսկովյան այցը, ըստ իշխանական աղբյուրների, ծրագրվել է Արեւմուտքի դրդմամբ, որտեղից Փաշինյանին պարտադրում են օր առաջ լուծում տալ Հարավկովկասյան երկաթուղու կոնցեսիայի հարցին: Սրանով է պայմանավորված, որ հանդիպումը նախաձեռնվել է Փաշինյանի խնդրանքով, ինչի մասին նա խոստովանեց վերջին բրիֆինգում: Այն բանից հետո, երբ ՌԴ-ից կոշտ արձագանքեցին երկաթուղու հետ կապված ՀՀ իշխանությունների մտադրություններին՝ տրանսպորտի նախարար Անդրեյ Նիկիտինը հայտարարեց, թե Ռուսաստանը Հայաստանի երկաթուղու կառավարման կոնցեսիան Ղազախստանին հանձնելու շուրջ չի բանակցում, Փաշինյանին արտաքին տերերը դրդեցին մեկնել Մոսկվա եւ լուծում տալ խնդրին: Հիշեցնենք, որ Փաշինյանը մարտի 26-ին հայտնել էր, որ Երեւանը դեմ չէ Հայաստանի երկաթուղին ղազախական կոնցեսիոն կառավարման հանձնելու տարբերակին, եթե այդ հարցում համաձայնություն ձեռք բերվի Ռուսաստանի հետ: Թե ինչ բանակցություններ են ընթացել Պուտինի եւ Փաշինյանի միջեւ, առայժմ հայտնի չէ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԶՆՆՈՒՄ Է ՊԱՏՎԻՐԵԼ

Վարչապետի աշխատակազմն «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հետ քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ հոգեբուժական զննում իրականացնելու ծառայության մատուցման պայմանագիր է կնքել: Այս մասին տեղեկանում ենք մեկ անձից կատարվող գնումների հարթակից: Ըստ պայմանագրի, «Ավան հոգեկան առողջության կենտրոն»-ը պետք է իրականացնի Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների՝ «Զենք պահելու եւ կրելու թույլտվություն ստանալու համար» արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական զննում: Հետազոտությունն իրականացվելու է կլինիկոանամնեստիկ հետազոտության եւ փորձարարահոգեբանական մեթոդաբանությամբ: Համալիր հոգեբուժահոգեբանական հանձնաժողովային զննման արդյունքների հիման վրա տրվելու է եզրակացություն՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման 2023 թ. ապրիլի 13-ի թիվ 505-Ն պահանջների: Հետազոտությունը նախատեսվում է իրականացնել 20 անձի համար: Պայմանագիրը կնքվել է փետրվարի 24-ին: Ծառայության մատուցման դիմաց կառավարությունը վճարելու է 400 հազար դրամ: Ափսոս, որ վարչապետը զենք կրելու իրավունք ունեցողների ցանկում չէ:

ՄՈՍԿՎԱ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՊՈՒՏԻՆԻ ՀԱՄԱՐ ԵՋԱԿԻ ԳՈՐԾԻՉ Է

«Դրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Անդրիաս Ղուկասյանն** է:

- Այսօր՝ հումորի եւ հիմարների միջազգային օրը, Նիկոլ Փաշինյանը ռուսական կողմի հրավերով այցելել է Մոսկվա: Մի քանի օր առաջ նա հայտարարեց, որ Ռուսաստանը Հայաստանի բարեկամն է, սակայն դրանից առաջ թե՛ ինքը, թե՛ իր թիմը պնդում էին, որ Ռուսաստանը հիբրիդային պատերազմ է հայտարարել Հայաստանի դեմ, ասում էին, որ հենց «երաշխավորից» ազատվել ենք, պետություն ենք ունեցել, մեր անկախությունն է ամրապնդվել: Այսինքն, Փաշինյանը մեկ շաբաթ հակառուս է, մեկ շաբաթ՝ պրոռուս: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս հակասական հայտարարություններն ու այցը Մոսկվա: Ի դեպ, Նիկոլ Փաշինյանն իր իշխանավարման տարիներին ավելի քան 38 անգամ այցելել է ՌԴ: Հայաստանի որեւէ այլ ղեկավար այդքան շատ չի այցելել Ռուսաստան:

- Ես կարծում եմ, որ Նիկոլ Փաշինյանը համագործակցում է Ռուսաստանի իշխանությունների հետ, ավելին՝ նա կոորդինացնում է ռուսական կողմի հետ Հայաստանի արտաքին քաղաքականությունը եւ Ռուսաստանի Դաշնության պատվերով էլ արել է այն բոլոր քայլերը, որոնք տեղի են ունեցել Արցախի հետ՝ 2018-ից սկսած.... բանակցություններից սկսած, ամեն հնարավոր բան արեցին, որպեսզի Ադրբեջանն ունենա հարձակվելու մեծ հնարավորություն: Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիրը եւս նախապես համաձայնեցված էր ռուսական կողմի հետ: Այդ պատերազմի բուն նպատակն այն էր, որ ռուսական զորքերը բերվեին Արցախ: Ինչպես արձանագրեցիք՝ նա 38 անգամ այցելել է Մոսկվա եւ ամեն անգամ վերադառնալով Հայաստան՝ հայտարարել է, որ պետք է Արցախի նշաձողն իջեցնել, ինչից հետո Արցախը ենթարկվել է հարձակման՝ Ադրբեջանի կողմից, եւ հետո սկսվել է շրջափակումը՝ բլոկադան, եւ հայերի բռնի տեղահանումը: Այդ ամբողջը տեղի է ունեցել ՌԴ-ի հետ համաձայնեցված, համատեղ պայմանավորվածության արդյունքում: Իմ գնահատմամբ՝ Փաշինյանը Պուտինի համար եզակի գործիչ է, որն անվերապահորեն համաձայնեց Արցախն Ադրբեջանին հանձնելու ծրագիրը կյանքի կոչել: Ռուսաստանի համար շատ կարեւոր է, որ Հայաստանի ղեկավարը հլու-հնազանդ ենթարկվի իրեն: Այնպես որ, ռուսական կողմն ամեն ինչ անելու է, որ Փաշինյանը շարունակի իշխանավարել 2026-ից հետո եւս:

- Բայց ռուսական հեռուստաալիքները Փաշինյանին նաեւ պարբերաբար քննադատում ու ծաղրում են:

- Նաեւ նշում են, որ Փաշինյանն արեւմտամետ է, ասում են, որ նա Ռուսաստանին մեղադրում է հիբրիդային պատերազմ իրականացնելու մեջ եւ այլն, բայց այդ ամենն իրականում կեղծիք է՝ թե՛ Արեւմուտքի համար, թե՛ հայ հասարակության, որպեսզի տեսակետ ձեւավորվի, որ Հայաստանում կան ռուսամետ գործիչներ՝ Ռոբերտ Քոչարյան, Սամվել Կարապետյան, Գագիկ Ծառուկյան եւ այլն, որոնք չեն թաքցնում իրենց ռուսամետությունը, իսկ Փաշինյանին այս ամենի ֆոնին ներկայացնում են իբրեւ հակառուս, սակայն այդ պատկերն ամեն անգամ քանդվում է, երբ Նիկոլ Փաշինյանն այցելում է Ռուսաստան: Սա շատ տարօրինակ իրավիճակ է: Եթե հայ-ռուսական հարաբերություններն այդքան վատ վիճակում են գտնվում, ինչո՞ւ են այսքան ջերմ Փաշինյանին պարբերաբար Մոսկվա հրավիրում: ԱՊՀ տարածքում չկա այլ գործիչ, որն այդքան հաճախ ՌԴ է մեկնում: Սա եւս մեկ անգամ փաստում է այն մասին, թե որքան կարեւոր է Փաշինյանի գործոնը ՌԴ-ի համար:

- Բայց շաբաթներ առաջ Եվրապառլամենտում հոտնկայս Փաշինյանին ծափահարեցին, դրանից առաջ էլ ԱՄՆ փոխնախագահ Վենսը հայտարարեց, որ Փաշինյանին Ամերիկան աջակցում է: Այսինքն՝ նման խոշոր ուժերը չե՞ն հասկանում, թե ինչ խաղ է խաղում ՀՀ վարչապետը:

- Իմ կարծիքով՝ բոլորն էլ ամեն ինչ հասկանում են, սակայն Եվրամիությունն իր կողմից է ինչ-որ պահանջներ դնում ՀՀ-ի առջեւ, ԱՄՆ-ն էլ իր կողմից է պահանջներ դնում, իսկ Փաշինյանը խոստանում է դրանք կատարել: Հավանաբար, ԵՄ-ին եւ ԱՄՆ-ին Փաշինյանի խոստումներն այս փուլում բավարարում են: Նրանք ռուսական ազդեցության տակ գտնվող Փաշինյանից աստիճանաբար ստանում են այն, ինչ ցանկանում են այս փուլում ստանալ: Սերժ Սարգսյանի իշխանավարման տարիներին մենք ականատես ենք եղել մի երեւույթի, որ Հայաստանի ղեկավարությունը կարող է խոստումներ տալ եւ ոչինչ չանել: Օրինակ՝ ասոցացման պայմանագիրը: 2013 թվականի պատմությունն այդ մասին է: Ընտրություններից առաջ Սարգսյանը հակված էր ԵՄ-ի, ԱՄՆ-ի հետ համագործակցել, տրամաբանությունն էլ այն էր, որ վերընտրվելու շեմը հաղթահարվի.... Փաշինյանի պարագայում էլ կա ռիսկ, որ Հայաստանը կարող է Արեւմուտքին տված իր խոստումներից հրաժարվել: Սերժ Սարգսյանի փորձը դրա վառ ապացույցն է:

- Ուղղակի Նիկոլ Փաշինյանի պրոարեւմտյան քայլերը շատ ավելի ցցուն են: Ի դեպ, այսօրվա այցը Մոսկվա ինչի՞ մասին է, ըստ Ձեզ:

- Անգամ ռուսական լրատվամիջոցները չգիտեն, թե որն է այս հանդիպման օրակարգը: Ենթադրում եմ, որ քննարկումը լինելու է Իրանի դեմ ԱՄՆ-Իսրայել գործողությունների մասին: Օրակարգ են ստեղծում, հավանաբար, Ռուսաստանի իշխանությունները Փաշինյանին հանձնարարություն ունեն տալու: Իրանի հանգամանքն ամենատեսանելի գործոնն է այժմ, որը կարող է կողմերի հանդիպման համար պատճառ դառնալ: Չեմ կարծում, որ Հայաստանի ընտրություններն են այս հանդիպման հատուկ պատճառը: Արտաքին քաղաքական ամենախոշոր իրադարձությունն այժմ Իրանի ճգնաժամն է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՏԽՈՒՐ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ԴԺԳՈՒՅՆ ՆԵՐԿԱՆ

Դատավոր Մնացական Մարտիրոսյանն ապրիլի 1-ին 2 ամսով կալանք սահմանեց Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպի գործով կիրակի օրը ձերբակալված 18-ամյա Դավիթ Մինասյանի նկատմամբ: Ոմանք հույս էին փայփայում, որ դատավորը չի գնա այդ քայլին, որովհետեւ իրականում ո՛չ հարված է եղել, ո՛չ տուժող կա գործում, ո՛չ էլ Նիկոլ Փաշինյանի մազն է ծռվել: Իսկ եթե նա վիրավորվել է իր նկատմամբ քաղաքացիների վերաբերմունքից, ապա վիրավորանքն ապաքրեականացված է՝ նա կարող է քաղհայց ներկայացնել դատարան: Մանավանդ՝ մեղադրանքը բացարձակապես հորինված է՝ եկեղեցում հնարավոր չէ քաղաքական գործունեությամբ զբաղվել, այն էլ՝ պատարագի ժամանակ, եւ «պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու» մասին չի կարող խոսք անգամ գնալ: Քրօրենսգրքի այդ հոդվածի իմաստն իրավապահները կամ չեն հասկացել, կամ Փաշինյանից իջեցված ուղիղ հրահանգը կատարել են առանց մտածելու: Եվ եթե մարդը նախընտրական քարոզչություն է իրականացնում ու գնում է հանրության մեջ, ապա պետք է պատրաստ լինի, որ իրեն կարող են նաեւ վիրավորել, թքել իր վրա, անգամ փորձ անել խփելու, եւ դա չի կարող նրա «օրինական ծառայողական գործունեությանը միջամտություն» դիտվել: Բայց եթե քննիչները ենթարկվում են վարչապետին հլու-հնազանդ ծառայող մարդկանց, ենթադրվում է, որ դատարանն այդպիսին չպետք է լինի, եւ Մնացական Մարտիրոսյանը պետք է մերժեր կալանավորման միջնորդությունը: Սակայն, դատելով դատավոր Մնացի կենսագրությունից, սխալվում էին նման ենթադրություններ անողները:

2018-ից առաջ նախկին իշխանություններին հիմնավորապես ծառայած դատավոր Մնացական Մարտիրոսյանն իշխանափոխությունից հետո էլ շարունակեց պաշտոնավարել: Թվում էր՝ հենց Նիկոլ Փաշինյանը նրան պետք է հեռացնի, որովհետեւ ժամանակին իր գործն է քննել, բայց նա արագ հասկացավ, որ Մնացին պետք չէ հեռացնել, այլ պետք է «օգտագործել»: Ավելին՝ 2023թ. նա նույնիսկ ստանձնեց Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահի պաշտոնը:

Իսկ 2001թ. Մնացական Մարտիրոսյանը քննել է Ռոբերտ Քոչարյանի թիկնապահ Աղամալ Հարությունյանի՝ Կուկուի գործը, երբ վերջինս մեղադրվում էր Պողոս Պողոսյանին ծեծելով սպանելու մեջ: Աղամալ Հարությունյանը դատապարտվեց պայմանական ազատազրկման: Այս քրեական գործը վերաբացվել է 2018-ից հետո՝ նոր ի հայտ եկած հանգամանքների հիման վրա: 2006-ին Մնացական Մարտիրոսյանն է եղել Ժիրայր Սեֆիլյանի եւ Վարդան Մալխասյանի գործով դատավորը. ազատամարտիկները մեղադրվում էին իշխանափոխության կոչերի համար, Մարտիրոսյանը նրանց դատապարտեց ազատազրկման:

Մնացական Մարտիրոսյանը եղել է մարտի 1-ի իրադարձություններից հետո հայտնի «Յոթի գործով» դատավորը, որով մեղադրանքներ էին առաջադրվել Ալեքսանդր Արզումանյանին, Հակոբ Հակոբյանին, Գրիգոր Ոսկերչյանին, Սուրեն Սիրունյանին, Շանթ Հարությունյանին, Մյասնիկ Մալխասյանին, Սասուն Միքայելյանին: Տարիներ անց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բեկանեց այս գործը՝ արձանագրելով, որ խախտվել են ընդդիմադիրների հիմնարար իրավունքները: Մնացական Մարտիրոսյանն է Նիկոլ Փաշինյանին 2010 թվականին 7 տարվա ազատազրկման դատապարտել: Այս գործով դատավճիռը եւս ՄԻԵԴ-ը տարիներ անց բեկանեց, եւ դրա հիման վրա վճռաբեկ դատարանն արդարացրեց Փաշինյանին, բայց նույնիսկ դա չստիպեց, որ Մնացին պատժեն՝ ՄԻԵԴ վճռի հիմքով, ինչպես արեցին Սուրեն Անտոնյանի դեպքում:

Իսկ 2018-ից հետո Մնացական Մարտիրոսյանը սկսեց հենց Նիկոլ Փաշինյանի կամքը կատարել: Նա էր քննում գեներալ Մանվել Գրիգորյանի «տուշոնկաների» գործը եւ գեներալին այնքան պահեց կալանքի տակ, որ բանը դատավճիռ արձակելուն չհասավ. Մանվել Գրիգորյանը դատաքննության փուլում մահացավ: Նոյեմբերի 5-ի գործով Ցեղակրոն կուսակցության առաջնորդ Շանթ Հարությունյանի եւ մյուսների գործով դատավորը նույնպես եղել է Մնացական Մարտիրոսյանը: 2022-ին նա էր քննում այն անհեթեթ մեղադրանքը, որի արդյունքում կալանավորվել էր պրոդյուսեր Արմեն Գրիգորյանը եւ հենց Մնացի ներկայությամբ էլ դատարանում մահացավ: Նրան մեղադրում էին Շիրակի եւ Արարատի մարզերի բնակիչների հասցեին հնչեցրած ինչ-որ արտահայտությունների համար, որոնցով ազգամիջյան թշնամանք է հրահրել: 2022-ի հուլիսի 15-ին դատարանը պետք է քներ նրա կալանքի փոփոխման հարցը, նա շուրջ երկու ամիս կալանավորված էր: Հենց նիստի ընթացքում Արմեն Գրիգորյանն ուշագնաց եղավ, եւ տեղ հասած շտապօգնության բրիգադն արձանագրեց Գրիգորյանի մահը:

Մնացական Մարտիրոսյանը նաեւ սիրում է մարդկանց կալանավորել՝ նա նախաքննական մարմնի միջնորդությունները ամենից շատ բավարարած դատավորներից է: Նրա որոշմամբ կալանավորվել են ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը, արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանը, անորակ զենքի մատակարարման գործով անցնող Դավիթ Գալստյանը՝ Պատրոն Դավոն, Աղվան Հովսեփյանը: Ի դեպ, Գագիկ Ծառուկյանին այդ գործով վերջերս դատարանն արդարացրեց:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

5-ից ոչ մեկի միջնորդությունն ամբողջությամբ չի բավարարվել

Հակակոռուպցիոն կոմիտեն մարտի 30-ին հայտարարել էր, որ ընտրակաշառքի դեպք է բացահայտել, 5 մարդ ձերբակալվել է: Ապա 4-ին բաց թողեցին, 1 անձ կալանավորվեց՝ բավականին տարօրինակ բացատրությամբ: Ըստ իրավապահների՝ մի խումբ անձինք նպատակադրվել են ընտրողների ձայները գնելու համար կաշառք բաժանել Արմավիրի մարզում եւ այդ նպատակով Մեծամորում բացել են «Մեր ձեւով» հասարակական կազմակերպության գրասենյակ, ապա մարդկանց «ձեւական գրանցել»՝ հանձնարարելով հավաքագրել անձանց, ովքեր հունիսի 7-ին կքվեարկեն «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ «խոստացված ընտրակաշառքը ձեւակերպվել է որպես աշխատավարձ՝ բացահայտումը նվազագույնի հասցնելու համար»: Հաղորդագրությանը զուգահեռ հրապարակվել են ձայնագրություններ, որոնցից, սակայն, հստակ չէ՝ ում միջեւ է զրույցը, եւ որն է զրույցի մեջ կրիմինալը, նաեւ՝ թե ինչ հանգամանքներում է այն ձայնագրվել:

«Ուժեղ Հայաստանից» հերքել են իրենց հասցեին մեղադրանքները, պնդել, որ հրապարակված ձայնագրությունը մոնտաժված է, իսկ կուսակցությունը գործում է Սահմանադրության եւ օրենքի շրջանակներում: «Իշխանությունների ձեռքին գործիք դարձած իրավապահների նկարած անհաջող ֆիլմը եւ մոնտաժված ձայնագրությունը հայտնի ձեռագիր է»,- հայտարարել է կուսակցության խոսնակ Մարիաննա Ղահրամանյանը՝ հավելելով. «Առաջիկա ընտրական գործընթացում միակ աղաղակող ու շարունակական ապօրինի գործողությունը մեր կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանի ակնհայտ ապօրինի, շուրջ տասն ամիսներ տեւող կալանքն է»:

Փաստաբան **Վահան Հովհաննիսյանին** «Հրապարակը» հարցրեց՝ ինչ հիմքով են հարուցել ընտրակաշառքի մեղադրանքը եւ մեկ քաղաքացու տարել կալանքի, իսկ մյուս չորսին ազատ արձակել՝ ինչ խափանման միջոց է ընտրվել այդ 4 անձի նկատմամբ: Փաստաբանն ասաց. «Ասեմ, որ նրանցից ոչ մեկի միջնորդությունն ամբողջությամբ չի բավարարվել, մեկինը մասնակի բավարարվել է, նա կալանավորվել է 1 ամսով, մեկինը՝ այլընտրանքային խափանման միջոց է ընտրվել, իսկ մյուս երկուսինը մերժվել է: Մեղադրանքները վերաբերում են ընտրակաշառքին, մի մասինը կաշառք տալու հետ է կապված, մի մասինը՝ կաշառք վերցնելու»:

ԱՄՈԹ է, ՈՐ ՏԱՐԻՔՆ ԱՌԱԾ ՄԱՐԴՆ ԸՆԿԵԼ Է ԻՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՑ ՓՈՔՐ ՏՂԱՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Սուրեն Զոլյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Մոսկվայի Վնուկովո օդանավակայանում ՀՀ վարչապետին դիմավորել է ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը: Փաշինյանը պարբերաբար հայտարարում է, որ ՌԴ-ն Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է սկսել, որ Ռուսաստանի գործողությունները վնասում են Հայաստանին, նրա երաշխավորության շրջանում ենք կորցրել տարածք եւ ունեցել զոհեր, սակայն արդեն 38 անգամ՝ 2018-ից ի վեր, այցելում է Մոսկվա: Ի՞նչն է նրան դրդում այդ քայլին:

- Պատասխանն ակնհայտ է՝ Նիկոլ Փաշինյանի կողմից արվող հայտարարությունները՝ հիբրիդային պատերազմ, չգիտես ինչ, լրիվ սուտ են: Եթե լիներ հիբրիդային պատերազմ, ապա բնական է, որ Փաշինյանը չէր գնա թշնամի երկիր, որտեղ անմիջապես կարող էր ձերբակալվել: Պատերազմի ժամանակ պատերազմող երկրի ղեկավարները կարող են միմյանց ձերբակալել: Իրականում, ոչ մի պատերազմ տեղի չի ունենում, եւ մենք կարող ենք եզրակացնել, որ այս ամենը մեծ սուտ է, սուտ է նաեւ գլխավոր լրտեսուհու զեկույցը, որ իբրեւ արտաքին հետախուզությունն ինչ-ինչ բաներ է հայտնաբերել, սուտ է նաեւ այն նամակը, որ գրել է արտաքին գործերի նախարարը՝ ԵՄ ներկայացուցիչներին, նրանք էլ իրենց հերթին փորձում են աշխատանք տանել այդ մասով, ինչ-որ խմբեր են ուղարկում Հայաստան եւ այլն: Այս ամենը բավարար է, որ վարչապետն ԱԳ նախարարին հորդորի ազատման դիմում գրել ու հեռանալ, քանի որ նա փաստացի կեղծ նամակներ է ուղարկել ԵՄ, խայտառակելով մեր պետությունը: Արտաքին հետախուզության տիկինը եւս պետք է հեռանա: Ալեն Սիմոնյանը եւս հայտնվել է անհարմար վիճակի մեջ:

- Բայց Փաշինյանը նաեւ հայտարարում է, որ Ռուսաստանը Հայաստանի բարեկամն է:

- Ուշացած, բայց լավ է, որ գոնե այդքանը հասկացել է, եկեք իրեն շնորհավորենք այդ կապակցությամբ:

- Բայց նա գնում է նաեւ Եվրապառլամենտ, խոստումներ է տալիս, ծափողջույնների է արժանանում....

- Նա պետք է ի վերջո կողմնորոշվի, թե որ ուղղությամբ է շարժվում: Տպավորություն է, թե այդ տղային ինչ-որ կոմպրոմատներով շանտաժի են ենթարկում, եւ նա ստիպված է այդ քայլերին դիմում:

- Իսկ հետեւո՞ւմ եք Փաշինյանի նախընտրական քարոզարշավին: Կիրակի օրը նրա մասնակցությամբ Սուրբ Աննա եկեղեցում միջադեպ տեղի ունեցավ, արդյունքում՝ 18-ամյա մի պատանի 2 ամսով կալանավորվեց:

- Դա ուղղակի մեծագույն խայտառակություն է: Բարոյական տեսանկյունից եթե դիտարկենք, անկախ այն բանից՝ վարչապետ ես, թե ոչ, ամոթ է, որ տարիքն առած մարդն ընկնում է իր երեխաներից փոքր տղաների ետեւից: Սա անբարոյականություն է: Այդ ճեղքումը՝ եկեղեցում, թիկնապահների պահվածքն ուղղակի ամոթալի են: Ես իրավաբան չեմ, բայց գիտեմ, որ գոյություն ունի աֆեկտի գաղափարը: Մարդուն երբեմն հասցնում են քայլերի, որը նա չի գիտակցում: Դեպք գիտեմ, որ անգամ ամուսնուն սպանած կնոջն են արդարացրել: Ամուսինը շատ խիստ վիրավորել էր կնոջը, եւ պատասխանը եղել էր նման ձեւով: Եթե անգամ մարդասպանություններն են երբեմն արդարացվում, ի՞նչ է արել այդ 18-ամյա տղան, որ պետք է երկու ամսով բանտարկվի: Աֆեկտի հանգամանքը պետք է անպայման հաշվի առնել, նույն գործողությունը կարող են կատարել տարբեր անձինք, մեկին արդարացնեն, մյուսին՝ ոչ, որովհետեւ մեկը կարող է լինել աֆեկտի տակ, իսկ մյուսը՝ սթափ: Օրինակս կրկին սպանությունների վրա բերեմ: Մի տեղ արդարացնում են կնոջը, որը սպանել էր ամուսնուն, մեկ այլ դեպքով չեն արդարացնում, քանի որ ասվում է, որ կինը գնացել, նկուղից կացին է բերել եւ սպանել ամուսնուն, այսինքն՝ մի տեղ մարդն ունեցել է սթափվելու ժամանակ, իսկ մի տեղ՝ ոչ: Իրավաբանության մեջ անպայման պետք է հաշվի առնել այդ հանգամանքը: Չի կարելի այդ տղայի քայլը համարել բռնության փորձ, էլ չենք խոսում այն մասին, որ պատահական մարդուն տանում են որպես կազմակերպիչ: Սա աբսուրդի ժանրից է, մարդը, թիկնապահներով շրջապատված, սարսափի մեջ է ապրում:

Տես

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՏԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից վերջին ամիսներին հաճախ ահազանգեր ենք ստանում՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացում իրենց համար ստեղծված խոչընդոտների, մասնավորապես բյուրոկրատական քաշքշուկի հետ կապված: 2026 թվականի մարտի պաշտոնական տվյալներով, 22 հազար չափահաս արցախցի է ՀՀ քաղաքացիություն ստացել: Զուգահեռ՝ հարյուր-հազարավոր դեպքերի մասին են բարձրաձայնում, որ ամիսներ առաջ դիմել են քաղաքացիություն ստանալու համար, բայց դեռ չեն ստացել, եւ սայլը տեղից չի շարժվում: Պաշտոնական վիճակագրությամբ, այժմ ավելի քան 10 հազար դիմում ընթացքի մեջ է՝ անհայտ ճակատագրով: Իսկ ոչ պաշտոնական տեղեկություններով, կրկնակի-եռակի շատ են դիմողներն ու խոչընդոտների հանդիպածները: Արցախցիների շրջանում կա համոզմունք, որ դժվար էլ մոտ ապագայում իրենց քաղաքացիություն տրամադրելու գործընթացում առաջընթաց նկատվի, քանի որ արցախցիներին ՀՀ քաղաքացիություն չտրամադրելու պատճառները մի քանիսն են:

Նախ՝ իշխանության բոլոր հարցումները ցույց են տալիս, որ իրենց պատճառով տնից-տեղից, հայրենիքից զրկված արցախցիները, հատուկենտ բացառությամբ, դեմ են իշխանական ուժին եւ ընտրություններին ընդդիմադիր ուժերին են ձայն տալու, ուստի ամեն ինչ անում են, որ քաղաքականապես ակտիվ մոտ 100 հազար արցախցի չմասնակցի ընտրություններին եւ չընտրի ընդդիմադիր ուժերին: Ամենավերին ատյանից հրահանգ կա՝ սառեցնել քաղաքացիության տրամադրումը: Բայց սա միայն պատճառներից մեկն է: Մեր աղբյուրներն առավել քան վստահ են, որ իշխանությունները գործընթացը ձգձգում են նաեւ այն պատճառով, որ ֆինանսական բեռ չավելացնեն պետական բյուջեի համար:

Բանն այն է, որ եթե Արցախի բնակիչները պաշտոնապես ճանաչվեն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, կառավարությունը պարտավոր կլինի պաշտպանել նրանց իրավունքները, այդ թվում՝ սեփականության, գույքային իրավունքը, հոգալ նրանց բնակարանային խնդիրները, իսկ վերջերս ընդունված որոշմամբ՝ Երեւանից դուրս տուն եւ բնակարան ձեռք բերելու համար արցախցի ընտանիքների յուրաքանչյուր անդամին 3 միլիոնի փոխարեն 4 միլիոն են հատկացնում: Հիմա իշխանությունները մանեւրի դաշտ ունեն, կարող են ասել՝ Արցախի բնակիչները քաղաքացիություն չունեին, այդ պատճառով էլ զրկված են բնակարանից ու պետբյուջեից հատկացումներից:

Հիշեցնենք, որ Արցախից բռնի տեղահանվածներն ունեն նույն կապույտ անձնագրերը, ինչ ՀՀ քաղաքացիները, մի տարբերությամբ, որ նրանց անձնագրերում 070 կոդն է նշված, եւ այս անհեթեթ ու արհեստական պատճառաբանությամբ, ՀՀ իշխանությունը որոշեց, որ նրանք ՀՀ քաղաքացիներ չեն, պետք է դիմեն քաղաքացիություն եւ նոր կոդով անձնագիր ստանալու համար, որ նաեւ կարողանան օգտվել բնակապահովման եւ այլ ծրագրերից: Կան նաեւ տեղեկություններ, որ իշխանությունները, այդուհանդերձ, իրենց աջակից արցախցիներին քաղաքացիություն ստանալու հարցում զարտուղի ճանապարհներով ընդառաջում են՝ պրոիշխանական տրամադրված արցախցիներին հավաքագրում են, չկողմնորոշվածներին՝ նյութապես շահագրգռում: Մենք ավելի վաղ գրել էինք, որ այդպիսի հրահանգ է իջել բոլոր մարզպետներին, իսկ բուն արցախցիների հետ ակտիվորեն աշխատում են Անվտանգության խորհրդի արցախցի քարտուղար Արմեն Գրիգորյանի հորեղբորորդին՝ նախկին ԱԱԾ-ական Անդրանիկ Գրիգորյանը, եւ արցախցի հասարակական գործիչ Լիանա Պետրոսյանը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՇԱՀՈՒ ԵՔ ՓՆՏՐՈՒՄ՝ ԲՌՆԵՔ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐԻՆ

Ակնհայտ անել, որ «Ուժեղ Հայաստանի» հետ ցանկացած համագործակցություն, այդ կուսակցության անդամների հետ ցանկացած շփում, այդ կուսակցության գրասենյակում որեւէ աշխատանք դիտվի հանցագործություն, որ մարդիկ ոչ միայն վախենան աշխատել կուսակցության համար, այլեւ նույնիսկ շփվել կուսակցության ներկայացուցիչների հետ: Ահա թե ինչ խնդիր է դրել փաշինյանական ռեժիմն իր առաջ:

Մարտի 30-ին փաշինյանական ռեժիմին սպասարկող Հակակոռուպցիոն կոմիտեն մի հաղորդագրություն տարածեց, ըստ որի՝ մի խումբ մարդիկ «Մեծամոր համայնքում բացել են «Մեր ձեւով» հասարակական կազմակերպության գրասենյակ, որից հետո Արմավիրի մարզի տարբեր բնակիչների 2025-2026 թթ. ընթացքում ձեւական գրանցել են հիշյալ կազմակերպությունում՝ հանձնարարելով հավաքագրել անձանց, ովքեր ընտրություններին կքվեարկեն «Ուժեղ Հայաստան» կուսակցության օգտին: Պարզվել է նաեւ, որ նախապես խոստացված եւ փուլային եղանակով տրամադրվող ընտրակաշառքը ձեւակերպվել է որպես աշխատավարձ՝ դրանով փորձելով քողարկել ընտրակաշառքի տրամադրման փաստը եւ նվազագույնի հասցնել դրա բացահայտումը»: Այս սարքած գործով 5 անձի ձերբակալեցին, որոնց մեղադրում էին ընտրակաշառք ստանալու, թե ընտրակաշառք բաժանելու մեջ: Որպես փաստական հիմք՝ ինչ-որ ձայնագրություն տարածեցին, որն ընդհանրապես ոչ մի բանի մասին է, ապա նրանցից 4-ին ծածուկ բաց թողեցին, մեկի նկատմամբ կալանք կիրառեցին:

Նախ, ռեժիմին սպասարկող Հակակոռուպցիոն կոմիտեն հասարակական կազմակերպությունում աշխատանքը ներկայացնում է որպես «ձեւական աշխատանք», որ իբրեւ թե մարդկանց աշխատանքի են վերցրել ոչ թե ինչ-որ գործ անելու համար, այլ որ նրանք ձայն բերեն «Ուժեղ Հայաստանի» համար: Եթե այս աչքով նայես, ապա պետական կառավարման համակարգի 80-90 տոկոսը հենց այդ հիմքով է աշխատավարձ ստանում. մարզպետարանները, տարբեր համայնքային կառույցներ, նախարարություններն ու դրանց կից մարմինները գոյություն ունեն միայն այն բանի համար, որ ընտրություններում ձայն բերեն: Եվ որքան ուռճացված է պետական կառավարման ապարատը, այնքան մեծաքանակ է ռեժիմի միակ հենարան համարվող վարչական ռեսուրսը, որն իր կենսաբանական գոյությունն ապահովելու համար քվեարկում է ռեժիմի օգտին՝ ինքն իրեն վերարտադրելու համար: Կարող է որեւէ մեկն ասել, թե ինչ հիմքով է ինչ-որ մեկը նշանակվում կամ ազատվում մարզպետի պաշտոնից. բացառապես մի հիմքով՝ կարող է նա կազմակերպել իշխանության նախընտրական քարոզարշավը տվյալ մարզում, որքա՞ն ձայն կարող է բերել իշխանության համար: Նույնը վերաբերում է նաեւ համայնքապետերին. սրանց՝ բոլորի աշխատանքի արդյունավետությունը չափվում է ձայն բերելու կարողությամբ:

Պետական կառավարման մյուս մարմինները՝ քննչական եւ հակակոռուպցիոն կոմիտեներ, դատախազություն, ոստիկանություն, ԱԱԾ եւ մյուս նմանատիպ ռեպրեսիվ մարմիններ, բացի ձայն բերելու գործից, համատեղությամբ զբաղվում են նաեւ իշխանության քաղաքական հակառակորդների դեմ տարբեր քրեական գործեր սարքելով եւ մարդկանց ազատությունից զրկելու միջոցով նրանց գործունեությունը չեզոքացնելով: Բոլոր իշխանությունների օրոք եղել են ճնշումներ ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ, հատկապես՝ նախընտրական շրջանում: Բայց որեւէ ժամանակ իշխանությունը չի մտել կուսակցությունների նախընտրական շտաբներ եւ կուսակցության համար աշխատող ակտիվիստներին չի հռչակել հանցագործներ, նրանց չի ձերբակալել ու կալանավորել, նրանց ստացած աշխատավարձը, այն էլ՝ օրինական գրանցված եւ հարկվող, չի հռչակել ընտրակաշառք, որեւէ մեկի մտքով չի անցել կուսակցության համախոհին կամ ակտիվիստին հռչակել քրեական հանցագործ եւ նրան կալանավորել ընտրակաշառք ստանալու կամ բաժանելու համար:

Ընտրակաշառքն այն է, երբ մարդուն քվեարկությունից առաջ գումար են տալիս, որի դիմաց նա պարտավորվում է քվեարկել որեւէ կուսակցության կամ թեկնածուի օգտին: Նման որեւէ դեպք փաստացի արձանագրված չէ, չկա որեւէ մեկը, որ կասի, թե իրեն գումար են տվել այս կամ այն քաղաքական ուժի, այս դեպքում՝ «Ուժեղ Հայաստանի» օգտին քվեարկելու համար: Թե ինչ է խոսվում ձայնագրության մեջ, դա հեքիաթի ժանրից է՝ հեքիաթ, քանի որ ռեժիմին ծառայող հատուկ ծառայությունների համար խնդիր չէ նման հեքիաթ հորինելը՝ որեւէ կուսակցության գրասենյակում ներդնելով իրենց ներկայացուցչին, հետո նրան հանձնարարելով հեռախոսով ինչ-որ բաներ խոսել ու ինքն իրեն ձայնագրել, դա ներկայացնելով որպես հանցագործության բացահայտման հիմք:

Չկա ընտրակաշառքի բաժանման դեպք, չկա ընտրակաշառք ստացող: Իսկ եթե որեւէ կուսակցության նախընտրական շտաբի կամ կուսակցության հետ փոխկապակցված կազմակերպության աշխատողի ստացած աշխատավարձը հռչակես ընտրակաշառք, որ նա դա ստացել է կուսակցության համար ձայն ապահովելու համար, ապա այդ հիմքով կարելի է մտնել ցանկացած կուսակցության գրասենյակ եւ կալանավորել բոլորին, որովհետեւ այդ շտաբները բացվում են հենց դրա համար՝ նախընտրական քարոզչություն իրականացնելու եւ կուսակցության համար քվեներ ապահովելու: Արդյունքում Հայաստանն ունեցավ եւս 5 քաղաքական հետապնդյալ, ամեն օր նոր ձերբակալվածներ ու կալանավորվածներ:

Փաշինյանը հրահանգ է իջեցրել՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության եւ, առհասարակ, ընդդիմության ցանկացած գործունեություն հռչակել հանցագործություն, մարդկանց ասել, որ հեռու մնան այս կուսակցություններից, նախընտրական շտաբներից, այլապես կարող են ձերբակալվել: Իսկ առաջ շարունակ խոսում էր արդար ընտրություններից, ազատ մրցակցությունից…

Ընտրակաշառքը եք ուզում բացահայտել՝ գնացեք եւ կալանավորեք բոլոր երեւանամերձ համայնքների ղեկավարներին, որ նախընտրական շրջանում՝ հունվար-փետրվարից սկսած, համայնքային բյուջեից ֆինանսավորում են անվճար ուսանողական ավտոբուսներ, համայնքապետարանն է որոշում՝ որ ուսանողն ինչ հիմքով ստանա այդ ավտոբուսով երթեւեկելու արտոնություն: Տանիքներ են փոխում, օգնություն բաժանում: Ինչպես ասում է ընտրակաշառք բաժանող ռեժիմի մի հաստիքային քարոզիչ՝ իշխանությունը քթներից է բերելու բաժանած եւ ստացած ընտրակաշառքի ամեն դրամը, եթե հաջողի վերարտադրվել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՒՆԵՆԱ ՄԵԾ ԴԻՎԻԴԵՆՏՆԵՐ, ԵԹԵ ՃԻՇՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿԻ



Հարցազրույց տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թաթուլ Մանասերյանի** հետ:

- Ընթացիկ ցուցանիշները ցույց են տալիս, որ 2026թ. առաջին երկու ամիսներին տնտեսական ակտիվության որոշակի աճ է գրանցվել: Մասնագետների պնդմամբ, դա պայմանավորված է Իրանում անցած տարեվերջին գրանցված ֆինանսական ճգնաժամով ու իրանական արժույթի կտրուկ անկմամբ: Դրա հետեւանքով Իրանից մեծ ծավալի կապիտալ է դուրս եկել, որի մի մասն էլ հասել է Հայաստան:

- Իրանում տեղի ունեցող պատերազմի հետեւանքները ապրանքների եւ ծառայությունների էժանացման արդյունքով կարող են դրական ազդեցություն ունենալ եւ արդեն ունեցել են. չմոռանանք, որ նախորդ տարի եւս այդ աշխուժությունը եղել է եւ նույն պատճառով: Եվ գիտենք, որ իրանական երկու արժույթն էլ կտրուկ արժեզրկվել են: Բայց կա նաեւ կապիտալի որոշակի «փախուստ» երկրից, սրանով պայմանավորված՝ եւս ներդրումներ կան, եւ դրանք հիմնականում անշարժ գույքի եւ այլ ոլորտներում են: Ցավոք սրտի, տնտեսության իրական հատվածն առայժմ լուրջ արդյունքներ չի գրանցում:

- Պնդումներ կան, որ Իրանում տեղի ունեցող պատերազմի ֆոնին նկատվում է ԱՄԷ-ի եւ Պարսից ծոցի երկրների աղքատացում, եւ այդ երկրներից եւս կապիտալը դուրս է գալիս եւ գալիս է նաեւ Հայաստան: Այսինքն՝ այս պահին 3 ուղղությունից մեծ քանակի արտարժույթ է գալիս Հայաստան: Այս տեղեկությունները որքանո՞վ են արժանահավատ, եւ այս համատեքստում ի՞նչ դիվիդենտներ կարող է ունենալ մեր երկիրը:

- Հայաստանը կարող է ունենալ բավականին մեծ դիվիդենտներ, քանի որ սահմանափակ՝ փոքր տնտեսություն ունեցող երկրի էֆեկտը բավականին արագ աճն է՝ դրական ազդակների հետեւանքով, սակայն դա միայն այն դեպքում տեղի կունենար, եթե Հայաստանն ունենար տնտեսության զարգացման հստակ ռազմավարություն եւ ՀՆԱ-ի հստակ կառուցվածք, ինչն էլ տարեցտարի փոփոխվում է՝ մեկ վերաարտահանման հսկայական տեսակարար կշռի, մեկ ծառայությունների ոլորտի, մեկ հանքարդյունաբերության եւ այլ ոլորտների մեջ փոփոխական աճերով: Առաջին նախապայմանը, որ կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսության վրա, նման հարափոփոխ տարածաշրջանային իրադարձությունների պայմաններում, առաջին հերթին տնտեսական ծրագրի առկայությունն ու արհեստավարժությունն է:

- Իսկ որքանո՞վ է կապիտալի ներհոսքը ազդեցիկ տնտեսության իրական ճյուղերում, եւ դա ինչպե՞ս է արտացոլվում տնտեսական համահավաք աճի մեջ:

- Հիշենք, որ ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով Հայաստան բերված հսկայական քանակությամբ արտարժույթ, իսկ ավելի կոնկրետ՝ 5 մլրդ դոլարից ավելի միայն առաջին տարում, այսինքն՝ 8 ամիսների ընթացքում, երբ ներհոսեց մեր հանրապետություն, դրա հետեւանքով ազգային արժույթն արժեւորվեց 20 տոկոսից ավելի, որը վատ ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, այլեւս այդ բարձր կետից չի իջնում: Դրան զուգահեռ, նաեւ բարձրացան առաջին անհրաժեշտության ապրանքների գները, որոնք եւս չեն դադարում իրենց աճը, մինչդեռ պետք է հակառակ տենդենցը տեղի ունենար՝ ազգային արժույթի արժեւորման պայմաններում: Ուստի պետք է ուշադիր լինել, որ ՀՀ դրամի գերարժեւորումը մեծ հարված չհասցնի տնտեսության իրական հատվածին:

- ԱՄԷ-ն չեղարկել է ԻԻՀ քաղաքացիների՝ Արաբական Միացյալ Էմիրություններում բնակության բոլոր տեսակի թույլտվություններն ու գործարար արտոնյալ վիզաները, դարձյալ Իրանի դեմ պատերազմի պատճառով: ԱՄԷ-ում կան հարյուրավոր իրանցի գործարարներ, ներդրողներ՝ ահռելի կապիտալով: Այս պայմաններում ինչպե՞ս կարող է Հայաստանը գրավել իրանցի բիզնես շրջանակներին եւ ներդրումներ բերել մեր երկիր:

- Այո, ընդհանրապես, տարածաշրջանում ապակայունացումը որոշակի ազդեցություն թողնում է Հայաստանի տնտեսության վրա, եւ ԱՄԷ-ից նկատվում է արտարժույթի հոսք դեպի Հայաստան, առհասարակ՝ հետաքրքրությունն աճում է, անորոշության համընդհանուր տուրբուլենտության ֆոնին Հայաստանի՝ հարաբերականորեն կայուն վիճակը որոշակի գրավչություն ունի: Բայց պետք է հիշենք, որ նման իրադարձություններ տեղի ունեցան նաեւ 2022 թ. փետրվարի վերջից՝ մարտից սկսած, երբ ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով հսկայական քանակությամբ նախ ռելոկանտներ եկան, ապա նրանք իրենց հետ արտարժույթ բերեցին Հայաստանի Հանրապետություն:

Արա ԱԼՈՅԱՆ

ԿՈՂՔԱՄԵՋ

ԳՐԱԶ ԿԳԱՄ, ՈՐ ԳՐԱԶ ԳԱԼ ՉԱՐԺԵ

Քաղաքական բանավեճի որակը մեր երկրում շատ ցածր է, ավելի ցածր՝ տեղ չկա: Ամենեւին կարեւոր չէ, թե հատկապես քաղաքական որ թեման է արծարծվում. այն արծարծվում է շատ տգեղ բառամթերքով եւ նողկալի ոճաբանությամբ: Տգեղ եւ ցածր.այս բնորոշման մեջ են տեղավորվում թե՛ պաշտոնյաները, թե՛ նրանց ընդդիմախոսները, թե՛ վերլուծաբաններն ու քաղաքագետները, թե՛ սովորական քաղաքացիները, թե՛ իշխանության կողմնակից, թե՛ ընդդիմության համակիր: Գրեթե բոլորը: Երբ այս ամենին ավելանում է նաեւ «գրազ գալու» մշակույթը, թե ով կհաղթի, նշածողն ավելի է իջնում:

Ինչպե՞ս հասանք այս վիճակին: Կարելի է վստահ ասել՝ ստեղծված իրավիճակից ոչ ոք գոհ չէ՝ ո՛չ իշխանությունը, ո՛չ ընդդիմությունը, ո՛չ էլ նրանց համակիրները: Օրինակ՝ կարո՞ղ է Նիկոլ Փաշինյանը գոհ լինել իր կողմնակիցներից, որոնց հետ առերեսվում է այս վաղաժամ եւ, ըստ էության, օրենքից դուրս քարոզարշավի ընթացքում: Կամ արդյոք այդ թվում մարդիկ, որոնք մոտենում են, մի քանի բառ են փոխանակում եւ խոր տարակուսանք, արհամարհանք կամ զզվանք չեն առաջացնում: Գրազ կգամ, որ չկան: Գալիս են, խոսում են թեմաներից, որոնք ոչ մի կապ չունեն քաղաքական գործընթացների հետ, ընդհուպ՝ շատ անձնական թեմաներ են առաջ քաշում: Նիկոլական կինը՝ շողոքորթ ու տգետ, նաեւ՝ անամոթ, դստեր մայրանալու թեման է բարձրաձայնում: Փաշինյանի համակիրն է՝ չի խորշում ուղիղ եթերում ամբողջ մարդկությանը ներկայացնել իր աղջկա չբերության դարդը՝ աջակցություն ակնկալելով վարչապետից: Սա զավեշտալիներից էր, բայց ոչ միակը...

Նկատելի է, որ վաղուց ոչ մի նշանակալի բան այդ մարդկանց կյանքում չի եղել: Վերջին անգամ իսկական ուրախություն ապրել են 2018 թվականի իշխանափոխության օրերին: Ընդհանրապես, դա է նրանց կյանքի միակ նշանակալի ձեռքբերումը, քանի որ նրանք ձախողել են ամեն ինչ՝ թե՛ կրթություն ու դաստիարակություն, թե՛ նվազագույն բարեկեցիկ կյանքի հնարավորություն, թե՛ նորմալ ընտանիք ու նորմալ զավակներ ունենալու բախտը: Ձախողել են ամեն ինչ, ինչ կարելի էր ձախողել, եւ հիմա հայրենիքի ձախողումները նրանց համար ոչինչ են: Նրանք հատակում են, եւ այդ հատակից կյանքն ամենեւին այնպիսին չէ, ինչպիսին երեւում է կրթություն ստացած եւ արժեքներ ունեցող մարդկանց աչքին:

Գրազ կգամ, որ այս ընտրազանգվածը հաճելի եւ դուրեկան չէ հենց Նիկոլ Փաշինյանի համար: Նա ճանաչում է այդ խավին, շատ լավ գիտի՝ ովքեր են նրանք, ինչպես են մտածում, եւ շատ կուզեր, որ նրանք չլինեին իր աջակիցները: Նրան անձամբ հաջողվել է դուրս պրծնել այդ շրջապատից: Այդ ընչազուրկ եւ անինքնասեր մարդկանց նա նայել է վերեւից, ասել է՝ նրանց աղքատությունը հենց իրենց գլխում է, իրենց վատ կյանքն իրենց մեղքով է՝ իրենց անկրթության ու հետամնացության պատճառով: Նա բնութագրել է այդ խավին, զզվանքով հեռացրել իրենից եւ ապրել մի պահ որպես էլիտա: Մարդ, որը շրջապատված է տարբեր երկրների ղեկավարներով, շփվում է աշխարհի բարձրակարգ միջավայրերում, օգտվում ամենայն բարիքներից՝ ամենաորակյալից, ամենալավից, ամենահամեղից: Իսկ հիմա, ահա, նորից դուրս է եկել եւ չափչփում է ամենացածր խավի խորխորատները՝ թե որքան ցածր կարող են նրանք լինել, որքան կարող են լինել անարժանապատիվ... Գրազ կգամ՝ սա անտանելի բան է, որ նորից նրան հետ է շպրտել դեպի այն ամենը, ինչից նա զզվում է... Չէ՞ որ հենց այս խավն է, որ մինչհեղափոխական ժամանակներում 5-10 հազար դրամով կամ մեկ շիշ ձեթով ու մի քանի կիլո բրնձով գնում էր ընտրության եւ ընտրում մարդկանց, որոնց դեմ հետո դուրս էին գալու պայքարի ու հեղափոխությամբ հեռացնելու էին իշխանությունից:

Գրազ կգամ, որ հենց այդ մարդիկ այսօր թքած ունեն այն բոլոր աղետների վրա, որոնք կատարվեցին մեր հայրենիքի հետ անցած 7-8 տարիներին: Հիմա գրազ գալը, թե ով կլինի նրանց բոլորի սիրելին ու ընտրյալը, անկեղծ ասած, նույնպես տգեղ է: Առաջարկում եմ գրազ չգալ, չփորձել ընդունելի եւ ընտրելի լինել այն մարդկանց համար, ովքեր 2026 թ. ապրիլին դեռ համակրում են իշխող կուսակցությանը: Այդ մարդիկ առաջիկա 2 ամսում չեն փոխվի: Ինչ էլ լինի, նրանք գնալու են ընտրության եւ ընտրելու են Նիկոլ Փաշինյանին:

Ուրեմն՝ իշխանությունը փորձում է պահել իր ընտրազանգվածի մնացորդները, ուրիշների վրա նա չի աշխատում: Ով արդեն երես է թեքել, այլեւս իրենց չի ընտրելու: Կարող եմ գրազ գալ, որ նրանք դա գիտեն: Նոր ընտրողներ Փաշինյանը չի փնտրում, եղածին է մի կերպ պահում՝ համոզելով, որ գան ընտրատեղամաս եւ ընտրեն իրեն: Կա մի մեծ խավ, որը լուռ ու հուսահատ հետեւում է այս նախընտրական «գրազներին», փոխադարձ բթամիտ սրամտություններին ու համեմատություններին եւ փորձում հասկանալ՝ կգտնվի՞ արդյոք մեկը, որ «մեծ զեղչով», մեծ վերապահումով կկարողանա համոզիչ լինել իր համար: Գրազ գալ չարժե: Պետք է կարողանալ ընտրատեղամաս հասցնել այն մարդուն, որը զզվել է ստեղծված իրավիճակից: Նա չի երեւում, չի մոտենում Փաշինյանին, բայց դեռ չի էլ մոտենում ընդդիմադիրներին: Նա լուռ հետեւում է՝ ոչ թե որպեսզի գրազ գաք իր վրա, այլ որպեսզի տարանջատվեք իրարից՝ շատ հստակ քաղաքական խոսքով:

Ահա, այդ մարդկանց հետ պետք է աշխատի ընդդիմությունը: Նրանց պետք է համոզի, որ չունի ոչինչ ընդհանուր այսօրվա իշխանության հետ եւ չունի այն արատները, որոնք ունեցել են սրանց նախորդները: Անգամ եթե նախկին են, ապա կարող են ճիշտ աշխատանքով շանս ստանալ: Չէ՞ որ անգամ պատերազմ ու պարտություն բերած ՔՊ-ն ստացավ երկրորդ շանս, չնայած դա էլ հաջողությամբ տապալեց: Ընդդիմությունն ու իշխանությունն այսօր աշխատում են երկու միանգամայն տարբեր դաշտերում: Նրանք իրարից ընտրող չեն «փախցնում»: Շատ հստակ է այդ անջրպետը, եւ ոչ մի կետում իշխանության եւ ընդդիմության համակիրների «ջրերը մի առվով չեն հոսում», ոչ մի տեղ չեն խառնվում: Դա նշանակում է, որ կարելի է իրար չպատասխանել, իրար ուշադրություն չդարձնել: Կարելի է աշխատել այնպես, կարծես նրանք արդեն չկան, լսելի չէ նրանց ձայնը, նրանց «գրազը», նրանց հեգնանքը, նրանց մեղադրանքը: Պետք է զրոյական ուշադրության արժանացնել իշխանության քարոզիչների առաջ բերած թեմաները, օրակարգերը: Պետք է առաջ գնալ այնպես, որ

հնարավոր չլինի շեղել, հնարավոր չլինի գայթակղել դեպի իրենց դաշտ, որտեղ կարող են հեգնել, ծաղրել ու ինքնահաստատվել:

Մի խոսքով, իշխանության հետ գրազ գալ չարժե՝ ո՛չ կատակով, ո՛չ լուրջ: Նրանց ասածներին արձագանքելու համար այլեւս ժամանակ չկա եւ, ամենակարեւորը՝ իմաստ չկա: Մարդը, որն ընտրելու է ընդդիմությանը, այլեւս ՔՊ-ի ընտրողը չէ, բայց նա դեռ լիարժեք ընդդիմության ընտրող էլ չէ: Նրան դեռ պետք է համոզել, որ գնա քվեարկության, եւ ես ամենայն լրջությամբ գրազ կգամ, որ դրա համար մնացած օրերի քանակն արդեն բավարար չէ:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՁԳԵԼ ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաշինյանն այս էտապում մի շատ կարեւոր խնդիր է լուծում իր համար՝ գործը հասցնել ընտրությունների եւ այդ ճանապարհով հեռանալ: Ոչ մի, առավել եւս Փաշինյանի նման ձախողված ղեկավարի հաճելի չէ ավելորդ «բոլոլաների» մեջ ընկնելը: Ավելին ասեմ, ես ճանաչում եմ ձախողված ղեկավարների, որոնք, գիտակցելով, որ մինչեւ ընտրություններ չեն ձգելու, ինքնասպան են եղել՝ «բոլոլայից» խուսափելու համար: Հիտլերը՝ ձեզ օրինակ: Չաուշեսկուի դեպքը ճիշտ հակառակն է՝ նա նախընտրեց «բոլոլան» եւ ստացավ «բոլոլա»: Հիմա Փաշինյանն է այս խնդրի առջեւ՝ ինչպես խուսափել «բոլոլայից»: Ընտրություններով հեռանալը, կարծում եմ, լավագույն ձեւն է: Հայտարարում ես, որ գնում ես ընտրությունների, մի ծռտի ընտրարշավ ես անում, պարտվում, մի երկու օր ղժղժում ու սսկվում: Իսկ մինչեւ հաղթողներն ուշքի գան, մինչեւ աթոռները բաժանեն, դու հանգիստ ծլկում ես՝ դառնում Սահակաշվիլի:

Իսկ որպեսզի Սահակաշվիլի չդառնա, Փաշինյանը պիտի այնքան խելք ունենա, որ պարտվի իր համար ամենաձեռնտու ուժին: Հակառակ պարագայում նրա բանը բուրդ է: Մի «սերյոզնի» ձյաձյա կարող է գալ իշխանության եւ իր առաջին գործը համարի Փաշինյանին ինչպես հայ, այնպես էլ միջազգային հանրությունից մեկուսացնելը: Ընդհուպ՝ առանց «բոլոլայի», դատավորի մուրճիկի մեկ հարվածով: Մեզանում էլ ինչն է շատ՝ կալանք տվող դատավորը: Աչքներն էլ չեն ճպպացնի:

Եվ, ուրեմն, Փաշինյանին պետք է մի ուժ, որ կերաշխավորի նրա հետընտրական արեւշատությունը, այն է՝ պատասխան չտալ իր կերած բողկերի համար եւ անփորձանք հեռանալ՝ լինի իշխանությունից, թե երկրից: Մենք ունե՞նք այդպիսի ուժ: Ունենք, այն էլ՝ շատ ուժեղ ուժ: Այդպես էլ կոչվում է՝ «Ուժեղ Հայաստան»: Բացի ուժեղ լինելը, այն նաեւ վստահելի է եւ բարեհոգի: Բարեվարքության բոլոր մրցույթներում հաղթած ուժ է... Ոչ մի ավելորդ բառ, ոչ մի ավելորդ շարժում, միշտ հանգիստ, հավասարակշռված: Մարդիկ եկել, իրենց համար իշխանափոխություն են անում՝ առանց որեւէ մեկին նեղություն տալու: ՔՊ-ն ինչքան փորձում է սադրել, չի ստացվում: ՀԷՑ-ը խլեցին, չէ՞: Դուք ավելորդ բառ լսեցի՞ք ՀԷՑ-ի սեփականատերերից... Թքած ՀԷՑ-ի վրա՝ ասացին, թքած այն միլիոնների վրա, որ ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչն է ստանալու մեզնից՝ որպես աշխատավարձ... Կալանավորվեցին, նստեցին, հետապնդվեցին, բայց ոչ մի ավելորդ բառ իրենց թույլ չտվեցին: Օրումեջ «Ուժեղ Հայաստանի» ավտոբուսներ են տանում տուգանային հրապարակներ, ընդդիմադիր մամուլն աղմկում է, իսկ «Ուժեղ Հայաստանից» բողոք կա՞: Եվ, ուրեմն, ինչքա՞ն էշ պետք է լինի ձախողված կառավարող ուժը, որ այսքանից հետո հենց «Ուժեղ Հայաստանի» մեջ չտեսնի պլստալու իր միակ հնարավորությունը:

Մյուսները, սակայն, «Ուժեղ Հայաստանի» չափ բարի չեն: Նրանք դեմ չեն «բոլոլային», բայց «բոլոլայի» համար տարբեր ժամկետների կողմնակից են: Ընդդիմությանը թիկունքից աջակցող ՀՀԿ-ն, օրինակ, համարում է, որ «բոլոլա» պետք է անել ընտրություններից առաջ... Ասում են՝ ի՞նչ մի դժվար բան է, ժողովրդին հանում ես փողոց, ռազ-դվա՝ իմպիչմենտ ես անում Նիկոլին, ու վերջ: Իսկ երբ հարցնում ես՝ բա որ չեղա՞վ... Սկսում են Ֆեյսբուքում «ուժեղ» գրառումներ անել ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի ու նրա ղեկավարի դեմ, թե դուք Աժ ընտրությունների անցողիկ շեմն էլ չեք հաղթահարելու: Այ, այսպիսի ընդդիմություն էլ ունենք՝ ընդդիմությանը թիկունքից «օգնող»:

Իսկ «բոլոլայիո» մասով ի՞նչ է առաջարկում ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը: Այստեղ ասում են, որ «բոլոլա» անպայման լինելու է, բայց՝ իշխանափոխությունից հետո: Ձախողված իշխանությունները, իսկ նրանց մասին քի՞չ է ասել «ձախողված», իշխանափոխությունից հետո, հունիսի 8-ից սկսած, օրենքով ենթարկվելու են ամենախիստ պատասխանատվության: Ընդհուպ հոդվածներն են նշում. «Արցախի հանձնում», «Հազարավոր զոհեր», «Հայաստանի օկուպացիա»...

Եվ այնպես է ստացվել, սոցհարցումներն էլ նույնն են ասում, որ Փաշինյանը հայտնվել է երկընտրանքի առջեւ՝ ում հանձնվել... Այն ուժին, որ իրեն թույլ կտա խուսափե՞լ «բոլոլայից», թե՞ այն ուժերին, որ խոստանում են իրեն պատասխանատվության ենթարկել, այսինքն՝ «բոլոլային»: Փաշինյանը, կարծում եմ, ընտրել է առաջին տարբերակը, իսկ թե ժողովուրդը որ տարբերակն է ընտրել, պարզ կդառնա մեկ այլ սոցհարցումից՝ ո՞վ է կողմ, որ Փաշինյանն ու ՔՊ-ն կառավարական շենքերը լքելուց հետո պատասխանատվության չենթարկվեն:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՇԽԱՐՀ

ԱՄՆ-ՆԱՏՕ «ԱՊԱՀԱՐՁԱՆ». ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՏԱԾԵԼՈՒ ԲԱՆ ՈՒՆԻ

Վերջին օրերին ավելի ու ավելի է խորանում ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի միջեւ լարվածությունը. ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կասկածի տակ է դնում դաշինքի արդյունավետությունն Իրանի դեմ պատերազմում եւ նույնիսկ սպառնում է, որ կլքի Հյուսիսատլանտյան դաշինքը: Հարցը նրանով է ուշագրավ, որ խոսքը համաշխարհային ռազմական ամենամեծ, ամենաազդեցիկ, ամենազորեղ կոալիցիայի եւ դրա համահիմնադիրի, եթե ոչ՝ կերտողի, գլխավոր դերակատարի միջեւ «քաղաքական ապահարզանի» մասին է: Բայց սա երկու բեւեռների միջեւ պարզունակ առճակատում չէ. տարբեր հարցերում, այդ թվում՝ Ուկրաինային օգնության հարցում, Եվրոպային ու եվրոպական առաջնորդներին պարբերաբար «հաթաթա» տվող Թրամփի քաղաքականությունն ու, ընդհանրապես, նրա եսակենտրոն վարքագիծը ճաքեր են տալիս: Եվ բացառված չէ, որ Հին մայրցամաքը հին «նեղացածությունները» փորձում է նոր իրողության՝ Իրանի դեմ պատերազմի պատեհությամբ օգտագործել՝ «գոտկատեղից ներքեւ հարված» հասցնելով ամերիկացի առաջնորդին:

Իրանն այս ամենից կարծես ավելի շատ է շահում. նախ՝ ՆԱՏՕ-ի դաշնակիցները, ի դեպ, Թուրքիան՝ եւս, առերեւույթ դեմ են Իսլամական Հանրապետության դեմ պատերազմին, երկրորդ՝ մերժում են իրենց տարածքը տրամադրել հարձակումների համար, երրորդ՝ անուղղակիորեն համերաշխություն են հայտնում պաշտոնական Թեհրանին եւ ակամայից համախմբվում Իրանի շուրջ: Իսկ ի՞նչ է ասում Թրամփը. նախօրեին նա հայտարարեց, որ քննարկում է Միացյալ Նահանգները ՆԱՏՕ-ից դուրս բերելու հարցը՝ դաշինքն անվանելով «թղթե վագր» եւ դժգոհություն հայտնելով դաշնակիցներից՝ Իրանի հետ հակամարտության կապակցությամբ: «Ես լրջորեն քննարկում եմ այդ տարբերակը, որոշումը դուրս է վերանայման սահմաններից: ՆԱՏՕ-ն երբեք համոզիչ չի թվացել ինձ: Ես միշտ գիտեի, որ նրանք թղթե վագր են»,- նշել է նա:

Թրամփն իր դիրքորոշումը կապել է դաշնակիցների կողմից Իրանի եւ Հորմուզի նեղուցի հետ կապված գործողություններին անբավարար աջակցության հետ: ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն էլ նշել է, թե Իրանի դեմ ռազմական գործողության ավարտից հետո Միացյալ Նահանգները կանդրադառնա ՆԱՏՕ-ին. «Մենք պետք է վերագնահատենք ՆԱՏՕ-ի արժեքը մեր երկրի համար: Վերջին հաշվով, դա նախագահի որոշումն է: Պետք է վերագնահատենք, թե արդյո՞ք այս դաշինքը, որը որոշ ժամանակ լավ է ծառայել մեր երկրին, ծառայում է այդ նպատակին, թե՞ դարձել է միակողմանի փողոց, որտեղ Ամերիկան դիրքավորվում է որպես Եվրոպայի պաշտպան, եւ երբ մենք նրանց օգնության կարիքն ունենք, նրանք մերժում են մեզ բազաներ եւ թռիչքներ կատարել երկրի վրայով»:

Հիշեցնենք, որ Հյուսիսատլանտյան դաշինքի մի շարք առաջատար երկրներ՝ Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան, մերժել են Վաշինգտոնին՝ թույլ չտալով օգտագործել իրենց երկրի օդային տարածքներն ու ռազմաբազաները՝ Իրանի դեմ ամերիկա-իսրայելական գործողությունների համար: Գերմանիան ու Մեծ Բրիտանիան էլ կտրականապես դեմ են Իրանի դեմ պատերազմին: Իսպանիան «ինքնիշխան երկիր է, որը չի ցանկանում մասնակցել անօրինական պատերազմներին»,- հայտարարել է թագավորության վարչապետ Պեդրո Սանչեսը. «Նախեւառաջ, ինչպես գիտեք, մենք մերժեցինք Միացյալ Նահանգների կողմից Ռոտա եւ Մորոն բազաների օգտագործումն այս անօրինական պատերազմի համար: Իրանի դեմ գործողության հետ կապված բոլոր թռիչքների ծրագրերը մերժվեցին՝ առանց բացառության»:

Փարիզի որոշման հետ կապված էլ Թրամփը զերծ չմնաց «հիշաչարությունից». պնդեց, որ «Ֆրանսիան չի թույլատրել, որ իր երկնքով անցնեն ռազմամթերքով բեռնված ինքնաթիռները, որոնք մեկնում էին Իսրայել: Նրանք շատ անօգտակար են եղել Իրանի դեմ գործողությունների ընթացքում: ԱՄՆ-ն այդ ամենը լավ կհիշի»: Սպիտակ տան ղեկավարը մեկ այլ գրառման մեջ քննադատել է նաեւ Մեծ Բրիտանիային՝ դարձյալ Հորմուզի նեղուցի ապաշրջափակման հարցում չօգնելու համար: «Մենք չենք աջակցում Իրանի դեմ պատերազմին, ոչ ոք մեր կարծիքը չի հարցրել»: Այս մասին էլ օրերս շեշտեց Իտալիայի ՊՆ ղեկավար Գվիդո Կրոզետոն: Բացի այդ, Իտալիան մերժել է ԱՄՆ-ին՝ օգտագործել Սիցիլիայի Սիգոնելլա ռազմաբազան՝ Իրանի դեմ հարվածներ հասցնելու համար,- հաղորդում է Corriere della Sera թերթը: Ըստ թերթի՝ արգելքը եղել է Իտալիայի պաշտպանության նախարարության կողմից: Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցի դիրքորոշումն էլ հստակ է. «Չկա որեւէ պատճառ, որ Բեռլինը քննարկի Հորմուզի նեղուցով անցնող նավերին ռազմական պաշտպանություն տրամադրելու հարցը: Գերմանիան այս պատերազմի մաս չէ, եւ մենք չենք ցանկանում մաս կազմել դրան»:

Մինչ Թրամփը «տաքացած» «սառը ցնցուղ է պահում» ՆԱՏՕ-ի ու նրա եվրոպական դաշնակիցների վրա, Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղարը հայտարարում է՝ ՆԱՏՕ-ն երբեք այսքան ուժեղ չի եղել: Նա նաեւ նշել է, որ դաշինքը զգալիորեն ավելացրել է սպառազինության արտադրության ծավալները: Այսքանը՝ դիվանագիտորեն, իսկ մյուսները գուցե համահավաք կարծիք արտահայտելու լիազորություն են ստացել՝ Փարիզի, Մադրիդի, Լոնդոնի, Հռոմի, Բեռլինի եւ այլոց «շուրթերով»: Փաստորեն, Թրամփի վարած պատերազմի գլոբալ քաղաքականությունը նրան դրել է անհարմար իրավիճակում ոչ միայն Եվրոպայում, աշխարհի մյուս հատվածներում, այլեւ բուն՝ ԱՄՆ-ում. նրա դեմ քննադատության ալիքը վերջին օրերին միլիոնավոր ամերիկացիների է դուրս բերել փողոց, որոնք նրան համարում են ԱՄՆ-ի համար գոյաբանական սպառնալիք, պատերազմի հանցագործ եւ ազգի թշնամի՝ ներգաղթային որոշումներից, համաամերիկյան բռնաճնշումներից մինչեւ Իրանի դեմ խելահեղ ու արյունահեղ պատերազմ:

Այս իրողության պայմաններում արժե ու անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ է, որ Հայաստանը կարողանա կարեւոր եզրակացություններ ու հաշվարկներ անել ԱՄՆ-ի հետ փոխհարաբերությունների զարգացման իմաստով, բայց կարեւոր նախապայման կա. իշխանա-քաղաքական «կալկուլյատորը» պետք է վերցնել Թրամփի խաղաղասիրությամբ ու TRIPP-ով հմայված Փաշինյանի ու նրա արեւմտամետ քարոզիչ իշխանախմբի ձեռքից եւ տալ նորը, որն իրապես հաշվի կառնի մեր պետության շահերն ու հաշվետու կլինի ժողովրդին՝ իհարկե, տարածաշրջանի, գլոբալ Արեւմուտքի եւ Միացյալ Եվրոպայի հետ փոխշահավետ համակեցության հաշվենկատությամբ: Հատկապես որ ՆԱՏՕ-ն խոստովանում է՝ մտադիր է խորացնել երկխոսությունն ու համագործակցությունը Հայաստանի հետ, քանի որ Հարավային Կովկասը կարեւոր է ՆԱՏՕ-ի անվտանգության համար:

Արա ԱԼՈՅԱՆ

ԱՄԵՆ ԻՆՉ ՉԱՓՈՒՄ ԵՆ ԱՍՖԱԼՏՈՎ, ԲԱՅՑ ԱՍՖԱԼՏՆ ԷԼ ԱՅՍՔԱՆ ՎԱՏ ԵՆ ԱՆՈՒՄ

Փետրվարի 12-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության ճանապարհների, մասնավորապես՝ Սայաթ-Նովայի, Խ. Հակոբջանյանի, 26 կոմիսարների, Խորհուրդների եւ Մոլդովական փողոցների փոսային նորոգման աշխատանքներ իրականացնելու համար: Համայնքի ավագանին քվեարկությամբ միակամ՝ 11 կողմ ձայնով որոշել է հավանություն տալ այս փողոցների ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացմանը, Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 80 միլիոն դրամ հատկացնել (Ճանապարհային տրանսպորտ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման (Շենքերի եւ կառույցների ընթացիկ նորոգում եւ պահպանում) տնտեսագիտական հոդվածին:

Այդ որոշման ընդունումից անցել է ավելի քան մեկուկես ամիս: Ինչպե՞ս են ծախսվել փողոցների նորոգման համար նախատեսված գումարները, երբ Դիլիջանում շատ փողոցներ վատթար վիճակում են: Դիլիջանի կենտրոնական մասում, հանրահայտ «Միմինո» արձանախմբի հետեւի մասում, կենտրոնից դեպի Դիլիջանի քաղաքային զբոսայգի, Դիլիջանի միջազգային դպրոց տանող փողոցի սկզբամասում բազում խոր լճակներ են: Ամեն անգամ անձրեւներից հետո ավտոմեքենաները դժվարությամբ են հաղթահարում այդ լճակները: Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանն իր պաշտոնավարման 5 տարիների ընթացքում չի նորոգել տուրիստական Դիլիջանի կենտրոնական փողոցը:

Դիլիջանի բնակիչ, հասարակական ակտիվիստ Լուսինե Գրիգորյանը քաղաքի կենտրոնի ջրափոսերի մասին ասում է. «Երկրում, որտեղ ղեկավարությունը կարծես ամեն ինչ չափում է ասֆալտի քանակով, ցավալի է տեսնել, որ հենց քաղաքի սրտում՝ տուրիստներով լի հատվածում, ճանապարհը մնացել է այսպիսի անմխիթար վիճակում: Սա այն վայրն է, որտեղ առաջին տպավորությունն է ձեւավորվում, բայց փոխարենը ստեղծվում է անտարբերության ու անպատասխանատվության պատկեր: Գուցե ժամանակն է ոչ միայն խոսել բարեկարգումից, այլեւ իրականում տեսանելի դարձնել այն հենց այնտեղ, որտեղ ամենաշատն է պետք»:

Դիլիջանի բնակիչ Էմմա Վարդանյանն էլ նշում է, որ Դիլիջանի այլ փողոցներ եւս վատ վիճակում են. «Ուսանողականն էլ է նույն վիճակում: Վերանորոգման աշխատանքները կատարում են աշնանը: Բայց գիտե՞ք, թե որն է զավեշտալի, փոսերը մաքրում են, շիբինը լցնում ու սպասում, մինչեւ անձրեւ գա, հետո էդ թաց փոսերի մեջ ասֆալտ են լցնում: Բնականաբար, մի սեզոն էլ չի դիմանում: Մի անգամ հանդիպեցի բանվորներին՝ Ուսանողական փողոցի փոսերը մաքրելիս, ասացի. «Մինչեւ անձրեւ չգա, չեք փակի, չէ՞»: Այդպես էլ եղավ»:

Դիլիջանի ՀՈԱԿ-ն իր ֆեյսբուքյան էջում տեսանյութ է տեղադրել, որտեղ քաղաքի Օրջոնիկիձե փողոցում գրեյդերը լցնում է ջրափոսերը: Դիլիջանի բնակիչներն այդ տեսանյութի տակ գրել են, որ ջրով լի փոսերի մեջ ասֆալտ չի կարելի լցնել, հետո գրել են նաեւ, որ փոսերի մեջ լցվածն ասֆալտ չէ, այլ՝ ճանապարհից քերված ասֆալտի շերտ՝ ֆրեզ: Դիլիջանի «Հասմիկ» ծաղկի սրահի տերն էլ մեկնաբանել է. «Էս փոխանակ քանդեք, նոր սարքեք, քանդված ասֆալտի թափոնները բերել՝ բակերն եք լցնում: Դե, մալադեց ձեզ: Նոր ասֆալտ արեք, ոչ թե ուրիշի աղբը բերեք մեր բակերը, ընտրությունները մոտենում են: Գետափնյա փողոցի նոր ասֆալտի՞ն նայենք, թե՞մեր բակ բերված թափոններին»:

Նատալյա Դավթյանն էլ գրել է. «Եթե մտնեք Մյասնիկյան 1-ին նրբանցք, կզարմանաք՝ ո՞նց են մարդիկ ապրում, տարիներով սպասել ենք, որ վերանորոգվի, ուրախանանք»: Տաթեւիկ անունով բնակչուհին էլ հարցրել է. «Ե՞րբ կհասնեք դեպի հիվանդանոց տանող կամրջին (Սայաթ-Նովա): Նախորդ տարի հավաստեցին, որ առաջիկայում: Ե՞րբ է լինելու առաջիկան»:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ով է իրականում եղել Դյումայի «երեք հրացանակիրների» դ՛Արտանյանը

30 տարեկանից բարձր, նաեւ՝ միջին ու ավագ սերնդի ներկայացուցիչների մեջ, թերեւս, հաշված մարդիկ կլինեն, որոնք չեն կարդացել Ալեքսանդր Դյումայի «Երեք հրացանակիրները» կամ չեն դիտել վեպի էկրանավորումներից որեւէ մեկը: Սակայն քչերը կարող են իմանալ, թե իրականում ով է եղել երեք հրացանակիրներից դ՛Արտանյանը, որի ածյունը վերջերս հայտնաբերվեց Նիդերլանդներում՝ թաղված եկեղեցու նախկին խորանի տակ: 1844 թվականին Դյումայի հրատարակած «Երեք հրացանակիրներում» դ՛Արտանյանն ընկալվում էր որպես տիպիկ ռոմանտիկ հերոս, որպիսին կարող էր լինել 17-րդ դարում՝ համարձակ մի գասկոնացի, որը ձգտում էր փառք ու պատվի՝ արքայի մոտ ծառայության մեջ, եւ հաջողության՝ կանանց շրջանում: Սակայն գրական այս կերպարի հետեւում իրական անձ կա, որին կանդրադառնանք այսօր:

Իրական կամ պատմական դ՛Արտանյանը Շարլ դե Բաթս դե Կաստելմոր դ՛Արտանյանն է: Ծնվել է, ամենայն հավանականությամբ, 1611-15 թթ. միջակայքում՝ Ֆրանսիայի հարավ-արեւմտյան հատվածում գտնվող Գասկոն երկրամասում: Հայրը Բերթրան դե Բաթսն է եղել: Սակայն նա ընդունել է մոր ազգանունը եւ դարձել դ՛Արտանյան: 17-րդ դարում դա նորմալ էր եւ ընդգծում էր ազնվականի ավելի բարձր ու հարգված ծագում ունենալը: 1630-ական թվականներին երիտասարդ դ՛Արտանյանն ուղեւորվում է Փարիզ, որտեղ էլ անցնում է զինվորական ծառայության: Շուտով անդամագրվում է արքայական հրացանակիրների գնդին, որն այն ժամանակ ֆրանսիական բանակի էլիտար ստորաբաժանում էր համարվում: Ի տարբերություն գրական հերոսի, պատմական դ՛Արտանյանը խիստ կարգապահ ու պրոֆեսիոնալ զինվորական էր: Լուի 14-րդ թագավորի կառավարման ժամանակ նա եղել է արքայի վստահելի սպաներից մեկը: Հատկապես նրա կարիերան կապված է եղել Լուի 14-րդի առաջին նախարար կարդինալ Ժյուլ Մազարինիի հետ: Վեպում, ի դեպ, դ՛Արտանյանը դեմ էր գործում կարդինալ Ռիշելյեին, սակայն պատմական իրականության մեջ իսկական դ՛Արտանյանը գործել է կարդինալ Մազարինիի վարչապետության շրջանում, այսպես ասած: Պատմական դ՛Արտանյանի կարիերան սերտորեն կապված է այն ժամանակվա ազդեցիկ նախարարներից մեկի՝ ֆինանսների նախարար Նիկոլա Ֆուկեի 1661 թ. ձերբակալության օպերացիայի հետ: Դ՛Արտանյանը մի քանի տարի շարունակ հսկում է Ֆուկեին՝ բանտարկության շրջանում ուղեկցելով նրան բանտից բանտ, դղյակից դղյակ: Զոհվել է 1673 թվականին՝ Մաստրիխտի պաշարման ժամանակ՝ ֆրանս-հոլանդական պատերազմի ընթացքում: Պատմական դ՛Արտանյանը ֆրանսիական ազգային հերոս էր: 1659 թվականին նա ամուսնացած է եղել Աննա Շառլոտա դե Շանլեսիի հետ: Ունեցել է զավակներ, եւ շառավիղները, որոնք կրում են դե Բաթս ազգանունը, այսօր շարունակում են ապրել Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում:

Վանաձորի դասվավոր աղաքաղաքացի

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, Վանաձորի պատվավոր քաղաքացի Վանդոս Ղարագյոզյանի նոր աշխատությունը կոչվում է «Ծանրամարտ. օլիմպիադայից օլիմպիադա. Տոկիո-Փարիզ»: Ծավալուն, հարուստ փաստական նյութով եւ բարձրորակ տպագրությամբ այս աշխատությունը հեղինակի 45-րդ գիրքն է: Այն նվիրված է լեգենդար ծանրորդ Յուրի Վարդանյանի հիշատակին եւ հայկական ծանրամարտի 100-ամյակին: Գրքում ներկայացված են աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների, օլիմպիական խաղերի արդյունքները, հայ ծանրորդների մասնակցությունն ու ձեռքբերումները, ռեկորդները: Բայց, ինչպես հեղինակի նախորդ աշխատություններում, այստեղ էլ խոսքը միայն մարզական վիճակագրության մասին չէ: Վանդոս Ղարագյոզյանի գրքերը ծանրամարտի պատմության յուրատեսակ տարեգրություն են, շատ մասնագետներ դրանք իրավամբ համարում են հանրագիտարանային արժեք ունեցող աշխատություններ:

Նրա մասին խոսելիս միայն գրքեր հիշելը քիչ է: Ղարագյոզյանի կյանքն ու գործունեությունը վաղուց դուրս են եկել մեկ բնագավառի սահմաններից: Ղարագյոզյանները Լոռու հայտնի տոհմերից են՝ ապուպապերով երգրումցի, հետո արդեն Ղարաքիլիսայի՝ այսօրվա Վանաձորի բնակիչ: Այդ տոհմի արժանի զավակներից մեկն էլ Վանդոս Ղարագյոզյանն է, որի կենսագրության գրեթե յուրաքանչյուր էջ կապված է իր ծննդավայր Վանաձորի հետ: Նրա գործունեությունը բազմաճյուղ է՝ արտադրական, պետական, հասարակական, մարզական, գիտամանկավարժական: Երիտասարդ տարիքից ղեկավարել է համամիութենական նշանակության մորթու-մուշտակի ֆաբրիկան. 15 տարի անընդմեջ կոլեկտիվը համամիութենական մրցույթի փոխանցիկ կարմիր դրոշ է ստացել: Բայց մարդիկ հիշում են ոչ միայն այդ հաջողությունները, այլեւ՝ ղեկավարին, որը գիտեր իր աշխատողների հոգսերն ու կարիքները, գնահատում էր աշխատանքը, արժեւորում մարդուն: 1989 թ. պատգամավորները նրան ընտրեցին Վանաձոր քաղաքի ղեկավար: Ծանր ժամանակաշրջան էր՝ երկրաշարժից հետո վերականգնման կարիք ունեցող քաղաք, տնտեսական եւ քաղաքական մեծ փոփոխություններ: Այդ տարիներին կառուցվեցին բնակարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ, երկաթուղային կայարանում՝ լրացուցիչ գծեր, նոր թաղամասեր՝ «Տարոն»-ները:

Եվ դրա կողքին շարունակվում էր նաեւ նրա կապը մարզաշխարհի հետ: Ծանրամարտի հանդեպ հետաքրքրությունը ժամանակի ընթացքում վերածվեց լուրջ հետազոտական աշխատանքի: Նա սկսեց հավաքել տարբեր մրցումների տվյալներ, փաստեր, արդյունքներ, եւ ծնվեց առաջին մեծածավալ աշխատությունը՝ «Ծանրամարտ. օլիմպիական խաղեր, աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններ»: Երբ գիրքը ներկայացվեց ծանրամարտի միջազգային ֆեդերացիայում, ֆեդերացիայի նախագահ Գոտֆրիդ Շրյոդերը հոտնկայս ծափահարեց՝ բարձր գնահատելով կատարված աշխատանքի ծավալն ու արժեքը: Գիրքն ընդունվեց ոչ միայն որպես հաջողված աշխատություն, այլեւ որպես ծանրամարտի պատմության կարեւոր աղբյուր: Հետագայում լույս տեսան նոր հատորներ: Այսօր Վ. Ղարագյոզյանը հեղինակ է մենագրությունների, բուհական դասագրքերի, գիտական հոդվածների, որոնք օգտագործում են մարզիչները, ուսանողները, հետազոտողները:

Նրա հետաքրքրությունները չեն սահմանափակվում մարզական թեմաներով: Վերջերս հրատարակեց «Ղարագյոզյան տոհմի պատմությունը» մեծածավալ գիրքը, որտեղ հավաքված են սերունդների հիշողությունները, ընտանեկան պատմություններ, քաղաքի կյանքի դրվագներ: Դա նույնպես յուրատեսակ փաստագրություն է՝ ոչ միայն մեկ ընտանիքի, այլեւ ամբողջ ժամանակաշրջանի մասին: Վ. Ղարագյոզյանը մինչ օրս դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում:

Մարդկանց հիշողության մեջ նրա կերպարը միայն պաշտոններով ու կոչումներով չի չափվում: Ընկերները նրան անվանել են Վանդոս Հարեհաս, որովհետեւ այն մարդկանցից է, ովքեր միշտ պատրաստ են օգնության հասնելու: Անվանի գրող Վահագն Մուղնեցյանը դիպուկ է բնութագրել. «Նա միշտ նույն Մեծ Ախպերն է՝ նույն ծանր-ապահով ձեռքն ընկերոջ ուսին»: Վ. Ղարագյոզյանը շարունակում է աշխատել նույն եռանդով՝ դասավանդել, ուսումնասիրել, գրել գրքեր, որոնք դարձել են մարզական գիտության կարեւոր աղբյուր, իսկ նրա անցած ճանապարհը՝ օրինակ այն բանի, թե ինչ կարող է անել մարդը, երբ աշխատանքը դառնում է կյանքի բնական շարունակությունը:

Երբ նայում ես նրա անցած ուղուն, հասկանում ես, որ այն միայն մեկ անձի կենսագրություն չէ՝ ամբողջ ժամանակաշրջանի պատմությունն է, որտեղ կա աշխատանք, նվիրում, գիտություն եւ քաղաքին ծառայելու զգացում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԱՀԱՊԵՏԸ

ԻՆՉ ՏԵՆԴԵՆՑՆԵՐ ԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընթերցանության կարեւորության մասին հաճախ կարելի է լսել, թե արդյո՞ք հասարակությունը ներկայում՝ Հայաստանում եւ աշխարհում, ընթերցասեր է կամ ոչ: Ինչ խոսք, ընթերցանությունը կարեւոր է մարդու ինքնազարգացման համար: Սակայն նաեւ կարեւոր է այն, թե ինչ կարող է այսօրվա մարդը կարդալ: Տեսնենք, թե ժամանակակից աշխարհում գրականության ոլորտում, հատկապես արձակի ժանրում, ինչ տենդենցներ են նկատվում: Ի սկզբանե նշենք, որ այժմ գրականությունը զարգանում է որպես բարդ մշակութային երեւույթ՝ արտացոլելով սոցիալական, տեխնոլոգիական եւ աշխարհայացքային այն տրանսֆորմացիաները, որոնք կան ներկայիս աշխարհում: Ավելի պարզ ասած՝ գլոբալացման, թվային մշակույթի եւ մշակույթի թվայնացման, ինչպես նաեւ՝ ընթերցանության պրակտիկայի հիմնավոր փոփոխություններ են նկատվում աշխարհում: Այսօրվա արձակը ողջ աշխարհում է աչքի ընկնում ժանրային ընդլայնումով, հիբրիդային ժանրային ձեւերի հայտ գալով: Վեպը, պատմվածքը, վիպակը, այսպես ասած՝ ակտիվորեն համագործակցում են այնպիսի ժանրերի հետ, ինչպիսիք են՝ վավերագրությունը, էսսեիստիկան, փիլիսոփայական տրակտատը: Նույնիսկ հրապարակախոսությունն այսօր հայտնվում է գրական արձակում, եւ դա նորմալ է դիտվում:

Մասնագետները նշում են, որ այս ամենը նորմալ է, քանի որ գրողները փորձում են համաքայլ ընթանալ ժամանակի հետ ու այն աշխարհի, որում ապրում են: Արձակ գործերի վրա էլի շատ մեծ է հետմոդեռնիզմի ազդեցությունը: Սակայն, զուգահեռաբար, այսօրվա գործերում մեծ է մարդու ներքին, հոգեբանական վիճակների եւ ապրումների, մարդկային ներաշխարհի վրա կենտրոնացվածությունը: Գրական գործերում հեղինակները խոսում են մարդու ներքին կոնֆլիկտների, վախերի, տրավմաների, ինքնաճանաչման, սեփական ինքնության գիտակցման մասին: Ինչպեսեւ կարելի էր սպասել, գրականության ժամանակակից տենդենցներում շարունակում են առաջնային մնալ գլոբալիզացիան եւ մշակութային ինքնության հետ կապված հարցերը, միգրացիան, սոցիալական անհավասարությունը, տեխնոլոգիական փոփոխություններն ու թվայնացումը, նաեւ՝ քաղաքական պրոցեսները՝ հակամարտություններ, պատերազմներ, համավարակ կամ համաճարակներ: Շատ մասնագետներ արձանագրում են, որ որոշակիորեն փոխվել է նաեւ արձակի շարադրման ձեւը՝ այն դարձել է ավելի ինտերակտիվ ու դինամիկ՝ «շնչող», որով էլ գրավում է ընթերցողներին:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՍՐԱՆԻՑ ԷԼ ԼԱՎ ԲԱ՞Ն

Ամայիս ԱՍԼԱՆՅԱՆ

Այնքան հաճախ են հնչում իշխանական եւ կուսակցական խաբեություններ՝ ստեր, չափազանցություններ, բանսարկություններ, միմյանց պախարակող անլուրջ մեղադրանքներ, նույնիսկ՝ անեծքներ, որ հասարակ մարդկանց մոտ գլխապտույտ է սկսվում, ու գարշանքով են ականջ դնում ընտրությունների թեմայով քննարկումներին: Իսկ եթե մեկը ներկայիս հայաստանյան խայտառակ իրավիճակը կարգավորող միտք է հայտնում, այն անհետանում է համատարած ստաբանության բովում: Ձեւավորվել է գաղափարական վակուում: Մինչդեռ այնքան էլ վակուում չէ՝ քաղաքական բովանդակությամբ խառնաշփոթ է, տեղով՝ լրատվական ապականություն, ուստի այն խորանում է իշխանական եւ ոչ քիչ թվով «ընդդիմադիր» ուժերի (կուսակցությունների) ջանքերով ու գռեհիկ ճաշակով: Իսկ քաղաքական ապականությունն ընտրություններ խեղաթյուրելու գլխավոր լծակներից է: Եվ այդ լծակը ընտրություններում գործադրում են իրենց հաղթանակի վրա կասկածող քաղաքական ուժերը, սկսած իշխող քաղաքական ուժից:

Ինչպես ցանկացած քաղաքական ուժ (լինի իշխանական, թե ընդդիմադիր) իր կազմում ունենում է երկու տեսակի բացասական գործիչներ. կարիերիստներ եւ դավաճաններ: Կարիերիստները գաղափարակիրներ չեն, նրանք ձգտում են լծակ ձեռք բերել՝ դիրքի, պաշտոնի հասնելու, պարգեւավճարի (բոնուս) արժանանալու, աշխարհով մեկ պտտվելու համար: Իսկ դավաճանները գաղափարակիրներ են: Նրանք իրենց գաղափարներն են ուրանում եւ կարիերիստների հետ ձեւավորում ճամբարափոխների խավը: Որպես երեւույթ՝ ճամբարափոխներն այսօր էլ պղտորում են քաղաքական դաշտը՝ ընտրությունների ընթացքը: Չմոռանանք, որ Հայաստանում 100-ից ավելի կուսակցություններ են գրանցված: Սա քաղաքական բիզնես է, որից օգտվում են ներսի եւ դրսի (արեւմտյան, ռուսական, տեղական ռուսամետ, տեղական արեւմտամետ) շահառուները: Ի լրումն հիշենք, որ քաղաքական բիզնեսի պայմաններում քաղաքական պայքարը վերափոխվում է անձերի միջեւ մրցակցության, ավելի հստակ՝ անձերի շահերի պայքարի, որակազրկելով գաղափարական պայքարը: Ուստի հունիսյան ընտրությունների արդյունքում որոշիչ կարող են լինել նաեւ փոդապտույտից բխող հետեւանքները:

Ներկա դրությամբ իշխող քաղաքական ուժի (ՔՊ) կազմում քիչ չեն այլ կուսակցությունների համը տեսած ճամբարափոխները: Այս առումով որոշ «վերլուծաբաններ» պեղել են ժամանակին ՀԱԿ-ին հարած կամ անդամակցած եւ տարիներ անց ճամբարափոխված, իսկ այժմ իշխող քաղաքական ուժի կարկառուն ներկայացուցիչներ դարձած «գործիչների»: Ի դեպ, կուսակցական լինել՝ նշանակում է չեղարկել նախորդ կուսակցությանը (կամ կուսակցություններին) տված հավատարմությունը, ուրանալ գաղափարախոսությունը եւ «օծվել» նոր մտած, «թարմ» կուսակցության գաղափարախոսությամբ: Հենց սա է ճամբարափոխության ուղնուծուծը, որը՝ գիտակցաբար, թե անգիտակցաբար, նկատելի չեն տալիս որոշ վերլուծաբաններ: Ավելին, նրանցից մեկը (գուցե գիտակցաբար ու խորամանկորեն) պատվեր է խաղարկել (ռոզիգրիշ), թե «Փաշինյանի կողմից վարվող քաղաքականությունը ՀԱԿ (հավանաբար, ճամբարափոխ հատվածի՝ Ա. Ա.) անդամների սրտով է, նրանց համար չափազանց ընդունելի եւ հոգեհարազատ, նրանք համոզված նիկոլապաշտ են»: Եվ հանգել այն մտքին, թե «նպատակը շատ ավելի պարզ է՝ օգնել գաղափարակիրներին (նախկին ՀԱԿ-ականներով ողողված ՔՊ-ին եւ գործող իշխանությանը) եւ մնալ իշխանություն»: Իսկ թե ինչու է հոդվածագիրը խաղում հենց ՀԱԿ-ի վրա, նույնպես պարզ է: ՀԱԿ-ը, ի տարբերություն մյուս ընդդիմադիրների, սկզբունքային, արմատական, կայուն ընդդիմություն է: Իշխանությունը հույս ունի, որ ՀԱԿ-ի «տեսականուց» գլուխ չհանող հանրությունն իշխանությանը լրացուցիչ ձայներ կբերի կամ կփոշիացնի: Սրանից էլ լավ բա՞ն...

Ոմանց թվում է, թե գործող իշխանությունը գլխի չի ընկել, որ հոդվածում ներկայացված ՀԱԿ-ՔՊ «նույնականության» պատկերը կարելի է գլխիվայր կարդալ եւ դեմ առնել մեկ այլ՝ թաքնված (կրիպտո) եզրահանգման, որում հայաստանյան գորշ իրականության համայնապատկերն է: Այսպես, «գլխիվայրի» հնարքով, սարկազմի ոճով, լրագրողական նրբանկատությամբ հեղինակը վերարտադրել է իշխանական բլոկի մտավոր, մշակութային, քաղաքական սնանկության համայնապատկերը:

Սրանից էլ ավելի լավ բա՞ն...

ՀԳ. *Բակա-տաղավարային զրույցներում հայաստանյան խորացող քաղաքական ճգնաժամի նկատմամբ վերաբերմունքը դարձել է ավելի կոշտ ու հատու: Ահա դրանցից մի քանիսը:*

1. Մնում է Էջմիածնի ՀԱԵ մայր տաճարի դրսի անկյուններում կառուցել չորս մզկիթ եւ տաճարի անունը դնել «Այա Սոֆիա-2»:

2. Եթե թատերագետ Լուիզա Սամվելյանը լսեր Գնել Սարգսյանի թատերականացված քաղաքական «քարոզը», չէր ասի Ստանիսլավսկու հայտնի խոսքը. «Չեմ հավատում», այլ կժպտար, իսկ եթե ասեր, կասեր՝ «փչան Թոդորոս»:

3. «Զոհված թոռանս գերեզմանով եմ երդվում, պատերազմի հրձիգից խաղաղության աղավնի չի սարքվի»,- ասաց ծերուկներից մեկը:

4. Ժամանակը չէ՞, որ Փաշինյանի եւ Ալիեւի միջեւ խնամական կապեր ձեւավորվեն: Գուցե այդկերպ վիրտուալ խաղաղությունն իրական դառնա:

5. Մեկն էլ առաջարկեց մեր վարչապետի անունը գրանցել Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես ամենա-ամենա-ամենասուտասան ղեկավարի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 2.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԻԶՄԸ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ Է ՔՐԵԱՕԼԻԳԱՐԽԻԱՅԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ



Շարունակելի
Պետրոս ՄԱԿԵՅԱՆ

2020թ. 44-օրյա պատերազմում կանխորոշված պարտություն տանելուց հետո Նիկոլիզմը մեկ խնդիր է լուծում՝ ամեն գնով պահել իշխանությունը, ստորադասելով պետական ու ազգային շահերը, կատարելով թշնամու բոլոր պահանջները, մուրալ «խաղաղության պայմանագիր» ստորացուցիչ պայմաններով, տանելով վերջնական կապիտուլյացիայի:

Մաս 2

2020թ. նոյեմբերի 9-ից հետո երկիրը ցնցումներից զերծ պահելու եւ աստիճանաբար պարտվածի հոգեվիճակից ու քաղաքական խոր ճգնաժամը հաղթահարելու նպատակով փոխանակ ճանապարհային քարտեզ ներկայացվեր, մասնավորապես՝ հայտարարվեր ԱԺ արտահերթ ընտրությունների ժամկետը, միաժամանակ նշելով, որ ինքը՝ Նիկոլը, իր ձեւակերպմամբ, որպես պարտության հիմնական պատասխանատու, չի առաջադրվելու եւ անձամբ է ապահովելու ազատ, մրցակցային ընտրություններ կազմակերպելու գործընթացը: Նմանատիպ դիրքորոշում 2009-ին Ն. Փաշինյանն արտահայտել էր Սահակաշվիլու հետ կապված, որ իր քաղաքական թիմի պարտությունը չպետք է փաթաթի վրաց ժողովրդի վզին:

Հակառակը՝ Նիկոլ Փաշինյանը սկսեց մեղավորներ փնտրել ու նշանակել հիմնականում նախկիններին, որոնց 3 տարի պահեց, վերակենդանացրեց, որպեսզի իրեն հիմնական այլընտրանք մատուցեր: Արդյունքում ԱԺ-ում՝ Նիկոլի գլխավորությամբ, հայտնվեցին միայն նրանք, որոնք հիմնական պատասխանատուներն ու մեղավորներն են՝ երկիրն այսօրվա հանգրվանին հասցնելու համար:

Ժամանակին ժողովուրդը Նիկոլին աստվածացրեց քրեաօլիգարխիկ ռեժիմից իրեն «ազատագրելու» համար, քանի որ հույս ուներ, որ ավարտվեց տասնամյակների իր պայքարը՝ քրեաօլիգարխիայի, բիզնեսի ու քաղաքականության տարանջատման, ընտրակաշառքի եւ ընտրական համակարգի այլասերման դեմ: Իսկ հիմա ականատես է դառնում, թե ինչպես Ն. Փաշինյանն օլիգարխներին ոչ միայն վերակենդանացրեց ու համալրեց յուրայիններով, ավելին՝ ինքը նույն արժեհամակարգի կրողը դարձավ: Եվ դա հիմնավորվում է օլիգարխիայի եւ մեծահարուստների ստվար ներկայությամբ եւ ծանրակշիռ դերակատարմամբ իշխանության մեջ, ինչպես նաեւ՝ պետական բյուջեի յուրացումով՝ պարգեւավճարների անվան տակ միլիարդներն իրար մեջ բաժանելով:

Հայաստանում առաջին անգամ համատարած ընտրակաշառք ներդնողը, քաղաքական անսկզբունքայնության ներկայացուցիչները, գործընկերներին բազմապատիկ դավաճանողներն ու ուրացողները Նիկոլ Փաշինյանի խմբակում գերակշիռ մեծամասնություն են կազմում, ավելին՝ այդ որակները կրողներն են հիմնականում կառավարությունում ընդգրկված: Նիկոլի թիմի մեծ մասի կենսագրությունը սկսվել է «Օրինաց երկրով», «Բարգավաճ Հայաստանով», Հանրապետականով:

2018-ից հասարակությանն անընդհատ խաբելու, մանիպուլյացիայի ենթարկելու եւ քրեաօլիգարխիան ավելի սանձարձակ գործելաոճով վերակենդանացնելու, ժողովրդին հարկային տեռորի ենթարկելու, այսպես կոչված՝ բարեփոխումների հետեւանքով տուգանքի մատերիալի վերածելու համար Նիկոլը ոչ միայն պետք է մերժվի, այլեւ պատասխանատվության ենթարկվի, հատկապես՝ ժողովրդին հուսախաբ անելու համար, բայց այս Ազգային ժողովը ձեւավորած ընտրազանգվածի մի զգալի մասը եւս պատասխանատու է: Նրանք Նիկոլի մեջ տեսնում են իրենց հայելային պատկերը՝ հասկանալով, որ չի կարելի երկիրը պարտության տարածի օգտին քվեարկել, այնուամենայնիվ, քվեարկեցին, որով շարունակվեցին երկրի պերմանենտ ցնցումներն ու քաոսը:

Փաշինյանի տեսակին պատկանող յուրաքանչյուր քվեարկողի համար պետք չէր բացատրություն՝ ստեղծված վիճակի համար, ինչպես Նիկոլն իր գործած կործանարար սխալների համար որեւէ անգամ չի զղջացել ու չի տվել հիմնավոր բացատրություն, փոխարենը՝ միշտ մեղավորներ է փնտրել եւ այլոց մեղավոր նշանակել:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am